AZG NEW 1.QXD 7/13/2009 11:21 PM Page 1

Ազգ Azg

14 ՅՈՒԼԻՍ 2009 ԵՐԵՔՇԱԲԹԻ 130 (4266)

ISSN: 1829-1651

## ԼՂՀ եւ Ադրբեջանի շփման գծում կանցկացվի հերթական մոնիտորինգը

**ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի (ԳՆԱՆ) գրասենյակը դիմել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարությանը հուլիսի 15-ին ԼՂՀ եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի՝ Ասկերանի ուղղությամբ նախատեսված դիտարկման իրականացմանը օժանդակելու խնդրանքով: Ինչպես «Արմենպրեսին» հայտնեցին ԼՂՀ ԱԳ նախարարությունից, ԼՂՀ պաշտպանության բանակի դիրքերից դիտարկումը կիրականացնեն ԵԱՀԿ գրասենյակի համակարգող, փոխգնդապետ Իմրե Պալատինուսը (Հունգարիա), ԵԱՀԿ ԳՆԱՆ դաշտային օգնականներ Վլադիմիր Զունտուլովը (Բուլղարիա) եւ Ժասլան Նուրտազինը (Ղազախստան): Հակառակ կողմից դիտարկումը կիրականացնեն գործող նախագահի անձնական ներկայացուցչի դաշտային օգնականներ Փիթեր Քին (Մեծ Բրիտանիա) եւ Իրժի Աբելեն (Չեխիա): Դիտարկման առաքելությանը ղարաբաղյան կողմից կուղեկցեն ԼՂՀ արտաքին գործերի նախարարության եւ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները:**

# Ղարաբաղյան հարցը՝ առաջընթաց գրանցո՞ղ

### *«Վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշում՝ իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության միջոցով»*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստան, Ադրբեջան եւ նախատեսված կարգով, բայց եղանակային պայմանների պատճառով չիրականացված Լեռնային Ղարաբաղ տարածաշրջան վերջին այցելության ժամանակ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, ի դեմս Ֆրանսիան ներկայացնող Բեռնար Ֆասիեի, հայտարարեցին, թե ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում քննարկվող մադրիդյան սկզբունքները մոտ 15-ն են: Դրանք, բնականաբար, չմանրամասնվեցին:

Ակվիլայում գագաթաժողով գումարած «Մեծ ութնյակի» ղեկավարներից երեք երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահներ Բարաք Օբաման, Նիկոլա Սարկոզին եւ Դմիտրի Մեդվեդեւը նախորդ շաբաթ հանդես եկան հայտարարությամբ, որով Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդներին հորդորում են կարգավորել Լեռնային Ղարաբաղի երկարատեւ հակամարտությունը:

«Մենք հանձնարարում ենք միջնորդներին Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին փոխանցել 2007 թվականին Մադրիդում ներկայացված խաղաղության հաստատման ծրագրի լրամշակված տարբերակը: Կոչ ենք անում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին լուծել մնացած մի քանի տարաձայնությունները եւ ավարտին տեսքի բերել հիմնարար սկզբունքների վերաբերյալ իրենց համաձայնությունը, որով կուրվագծվի համապարփակ կարգավորման ընդհանուր պատկերը», ասվում է Օբամայի, Սարկոզիի եւ Մեդվեդեւի համատեղ հայտարարությունում:

ԵԱՀԿ պաշտոնական կայքէջում տեղադրված հայտարարության համաձայն, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներ Ֆրանսիայի, Ռուսաստանի Դաշնության եւ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահները հաստատում են իրենց նվիրվածությունը՝ աջակցելու Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարներին կարգավորման հիմնարար սկզբունքները վերջնական տեսքի բերելու գործում:

Հայտարարության տեքստի հետ ներկայացվող տեղեկանքում նշվում է, որ մադրիդյան հիմնարար սկզբունքները արտացոլում են բանական (խելամիտ) փոխզիջում՝ հիմնված ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության, ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքների վրա:

Տես էջ 2

## ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍ

### 48 միլիոն Հայաստանի, 10 միլիոն՝ Ղարաբաղի համար

**ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը հավանություն է տվել օրինագծին, որով նախատեսվում է 2010 թվականին 48 միլիոն դոլարի օգնություն տրամադրել Հայաստանին, 10 միլիոն դոլարի օգնություն՝ Լեռնային Ղարաբաղին: Ինչպես տեղեկացրել է Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահ, հանրապետական Մարկ Քըրքը, հինգշաբթի երեկոյան ընդունված օրինագիծը պարունակում է նաեւ նոր պահանջ, որպեսզի վարչակազմը խորհրդակցի Կոնգրեսի հետ՝ Ադրբեջանին հատկացվող օգնության նկատմամբ «Ազատության աջակցության ակտի» թիվ 907 ուղղման գործողությունը սառեցնելուց առաջ, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը: Թիվ 907 ուղղմամբ Ադրբեջանին ամերիկյան օժանդակություն տրամադրելու պայման է համարվում այդ երկրի կողմից Հայաստանի շրջափակման վերացումը: 2002-ին Կոնգրեսը երկրի նախագահին օժտել է այդ դրույթը սառեցնելու լիազորությամբ, ինչից հետո ամեն տարի նախագահը կիրառել է այդ իրավունքը: Սենատի հատկացումների հանձնաժողովը օրերս հավանություն տվեց Հայաստանին 30 միլիոն դոլարի օգնություն տրամադրելու վարչակազմի առաջարկին: Սենատի հանձնաժողովի հավանությանը արժանացած նախագծում Ղարաբաղի համար օգնություն նախատեսված չէ: Այս օրինագիծը դեռ ենթակա է Սենատի քննարկմանը, ինչից հետո, Սենատի եւ Ներկայացուցիչների պալատի նախագծերում տարբերության առկայության դեպքում, կստեղծվի համաձայնեցնող հանձնաժողով, որի ընդունած նախագիծը նորից քվեարկության կդրվի Կոնգրեսի երկու պալատներում եւ հավանության արժանանալուց հետո կներկայացվի նախագահի վավերացմանը:**

# Միջանցքները շատ հանգիստ կարող են փակվել

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ, կարդալով ոմն անհայտ «Հայկական ընտրություն» անվամբ մի կուսակցության հայտարարություն, որը վարչախմբի անհատաղ պաշտոնանկությունն էր պահանջում այն դեպքում, երբ ստորագրվի մադրիդյան սկզբունքները ներառող որեւէ փաստաթուղթ, պատկերացրինք, թե որքան կատաղի են խոսելու հայտնի կուսակցությունք եւ նրանց առաջնորդք՝ հայրենիքը ծախելու եւ Ղարաբաղը հանձնելու վերաբերյալ, երբ... Խոստովանենք՝ ամառվա շոգին պատճառ ստեղծվեց, որ էս մեր քաղաքականները շոգից գնացած իրենց ուշքը հետ բերեն, քանի որ համանախագահ երկրների նախագահների՝ ղարաբաղյան հակամարտությունը կարգավորել հորդորող հայտարարությունն՝ ուղղված Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահներին, հենց այդ սառը ցնցուղն է: Ու տեսեք, Ստեփանակերտում դաշնակցականների խորհրդաժողովին եւս հնչել է



Է. Նալբանդյանի հրաժարականի պահանջ, ու անգամ այդ խորհրդաժողովը քիչ էր, ՀՅԴ բյուրոն նիստ է անելու, որ վերաբերմունքի հարց ճշտի այդ հայտարարության առթիվ, իսկ ՀՅԴ բյուրոյի անդամ, պատմաբան Լեւոն Մկրտչյանն այդ հայտարարությունն աննախադեպ է համարում:

Երեկ, իսկապես, փորձում էինք իշխանական կոալիցիայի անդամներից գոնե խորհրդարանական խմբակցությունների ղեկավարների ու քարտուղարների մակարդակով զանգահարել-պարզել նրանց վերաբերմունքն առ աշխարհի երեք հզորների հայտարարություն, քանի որ արագ արձագանքի խնդիրը, կարծում եմ, մեր քաղաքական շրջանակների պատվի գործը պետք է լինի, մանավանդ որ ՀԱԿ-ական Լեւոն Զուրաբյանը երեկ խոսում էր իրավիճակի լրջության եւ ԼՂՀ շուրջն օղակը սեղմվելու մասին (իրենց երազանքն է):

Տես էջ 8

# Ադրբեջանցիները դժգոհ են «Մադրիդյան սկզբունքներից»

**«Մադրիդյան սկզբունքները» պաշտոնապես հրապարակվել են: Ներկայացնենք Սպիտակ տան հրապարակած փաստաթղթում առկա այն վեց կետերը, որոնք հայտնի են որպես «Մադրիդյան սկզբունքներ»:**

**1. Լեռնային Ղարաբաղի հարակից շրջանների վերադարձ՝ Ադրբեջանի վերահսկողության ներքո:**

**2. Լեռնային Ղարաբաղին անցումային կարգավիճակի տրամադրում, նրա անվտանգության եւ ինքնակառավարման ապահովում:**

**3. Հայաստանը՝ Լեռնային Ղարաբաղին կապող միջանցք:**

**4. Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի սահմանում՝ իրավական պարտադիր հետեւանքով՝ կամ արտահայտության միջոցով:**

**5. Բոլոր ներքին տեղահանվածների ու փախստականների՝ իրենց նախկին բնակության վայրերը վերադառնալու իրավունք:**

**6. Անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք ներառում են խաղաղապահ գործողություններ:**

**Բանակցային գործընթացի հետահայաց դիտարկումը ցույց է տալիս, որ մինչեւ Սպիտակ տան պաշտոնական հաղորդագրությունը, պաշտոնական Բաքուն, մասնավորապես նախագահ Իլհամ Ալիեւը, արտգործնախարարը, տարբեր տրամաչափի գործիչներ, խոսում էին «Մադրիդյան սկզբունքների» մասին ու համոզիչ տոնով պնդում էին, թե Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի սահմաններից դուրս լուծումը ոչ ընդունում են, ոչ էլ առավել եւս բանակցում դրա շուրջ: Սակայն փաստաթղթի հրապարակումը ցույց տվեց, որ մոտ երկու տարի Ադրբեջանը բանակցում էր հենց դրա շուրջ, սակայն երկրի ներսում բանակցային գործընթացի տրամաբանությանը հակասող ձեւակերպումներ է շրջանառում: Պատահական չէ, որ ադրբեջանական կայքերում սկսել են այս առնչությամբ մտահոգություններ հայտնվել: Հավանաբար ԵԱՀԿ-ի պաշտոնական կայքում ու Սպիտակ տան կողմից «Մադրիդյան սկզբունքների» գաղտնազերծումը պայմանավորված էր նաեւ այս հանգամանքով:**

**Հասկանալի է, որ «Մադրիդյան սկզբունքներ» կոչվածը առանձնապես չի էլ բխում մեր շահերից, սակայն մի բան պարզ է, որ, եթե հաշվի չառնենք շեշտադրումները, Հայաստանի ղեկավարության հայտարարությունները այս հարցի շուրջ եւ գաղտնազերծված փաստերը իրար նույնպես չեն հակասում:**

# Nabucco-ի համաձայնագիրը ստորագրվեց

Անկարայում երեկ ստորագրվել է միջկառավարական համաձայնագիր Nabucco գազամուղի շինարարության վերաբերյալ: Այդ գազամուղով կասպիական գազը, Ռուսաստանը շրջանցելով՝ Թուրքիայով եւ Բալկաններով կհասնի Կենտրոնական Եվրոպա:




Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ փաստաթուղթը ստորագրել են Թուրքիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Բուլղարիայի եւ Ավստրիայի վարչապետները: Գերմանիան նախագծի մասնակից է, բայց չի ստորագրել, քանի որ տարանցիկ երկիր է:

Ադրբեջանի գազն անբավարար է խողովակաշարը լցնելու համար: Ղազախստանը եւ Թուրքմենստանը գազ վաճառում են Ռուսաստանին, իսկ Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցներ են ձեռնարկված: Այդ պատճառով գազամատակարարների հարցը երկար ժամանակ չէր լուծվում: Թուրքմենստանի նախագահ Ղուրբանղուլի Բերդիմուհամեդովը հուլիսի 10-ին նախագծին մասնակցելու պատրաստակամություն հայտնեց, բայց կոնկրետ խոստումներ չտվեց:

Հուլիսի 13-ին Իրաքի վարչապետ Նուրի ալ Մալիքին հայտարարեց, որ իր երկիրը կարող է Թուրքիայի տարածքով տարեկան 15 մլրդ խոր. մետր գազ մատակարարել Եվրոմիությանը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Մալիքին, սակայն, չմանրամասնեց, թե խոսքը Nabucco նախագծի՞ մասին է:

Nabucco-ի կառուցումը դեռ չի սկսվել, բայց նախագիծը գնահատվում է արդեն 8 մլրդ եվրո: Գազամուղի նախագծային հզորությունը 30 մլրդ խորանարդ մետր է: Nabucco-ն կդառնա արդեն կառուցված Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի շարունակությունը: Նախագիծն իրականացնող կոնսորցիումի մեջ մտնում են ավստրիական OMV, հունգարական MOL, ռումինական Transgaz, բուլղարական Bulgargaz եւ թուրքական Botas ընկերությունները:

# Սևանն ու իր խնդիրները

## Հիմնահարցերն այստեղ փոխկապակցված են

Որ Սեւանը հասել է մահացող լճերի մակարդակին, հաստատում է ՀՀ նախագահին առընթեր Սեւանի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահը: 1974 թվականից Սեւանա լճի հիմնահարցերով զբաղվող **Վլադիմիր Մովսիսյանը** համաձայնեց գլխավորել հանձնաժողովը, քանի որ «բնական այլ ռեսուրս չունենք, եւ յուրաքանչյուրս պետք է հոգ տանի Սեւանի մասին»: Հանձնաժողովի նախագահը, որ Սեւանի տվյալների մասին խոսում է միլիմետրերի ճշգրտությամբ, նկատում է, որ լիճը տարածաշրջանում քաղցրահամ ջրերի ամենամեծ պաշարն է: «Սեւանում 35 մլրդ խմ քաղցրահամ ջուր կա: 1933 թվականին այդ թիվը 58 մլրդ խմ էր, իսկ լճի մակարդակը նույն թվականի համեմատությամբ իջել է 16մ 17 սմ-ով», «Դե ֆակտո» ակումբում լրագրողների հետ հանդիպմանը ասաց Վլադիմիր Մովսիսյանը:




Նաեւ Սեւանի պահպանության համար կառուցված Արփա-Սեւան թունելը, Որոտանի հանգույցը, Ապարանի եւ Ազատանի ջրամբարները, դրանց շինարարության ծախսերը աննպատակ կդառնան, «եթե չշարունակենք Սեւանի պահպանմանն ուղղված միջոցառումները»: Դեկտեմբերին կազմավորված հանձնաժողովը նպատակ ունի առաջարկություններով եւ ուսումնասիրություններով նպաստելու լճի պահպանմանը: Լճի մակարդակի բարձրացումը հիմնախնդիրների շարքում առաջինն է: «Լիճը պետք է հասցվի 1903.5 մետր բարձրության: Սա այն բարձրությունն է, որի դեպքում լճի թթվածնային եւ ջերմային ռեժիմը նորմայի սահմաններում է: Այդ մակարդակը խախտվել էր, այդ իսկ պատճառով լիճը սկսել էր «ծաղկել»: 1903.5 մետրին հասնելու համար մեզ անհրաժեշտ է լճի մակարդակը բարձրացնել 4մ 65 սմ-ով: 2031 թվականին նախատեսվում է ապահովել այդ նիշը: Նախորդ տարվա համեմատությամբ լճի մակարդակը բարձրացել է 13 սմ-ով», ասաց Վլադիմիր Մովսիսյանը: Հանձնաժողովում հաշվարկել են, որ այդ մակարդակին հասնելու դեպքում ջրի պաշարները կավելանան 8 մլրդ խմ-ով:

Ոռոգման նպատակով այս տարի Սեւանից բաց է թողնվել 142 մլն խմ ջուր, նախորդ տարվա 302 մլն խմ-ի համեմատությամբ: «Սա նաեւ բնության շնորհիվ էր, քանի որ տարին ավելի ջրառատ էր: Բայց խնդիրն այն է, որ բաց թողնված ջրի շուրջ կեսը կորում է ոռոգման ներքին ցանցերի վնասվածության պատճառով», ասաց հանձնաժողովի նախագահը:

Լճի մակարդակի բարձրացումն իր հերթին անիմաստ կդառնա, եթե չլուծվի ջրի մաքրության հարցը: Լճի մակարդակի բարձրացման դեպքում ջրի տակ են մնալու արհեստական անտառները, 18 կմ երկարության էլեկտրահաղորդման համակարգերը, 19 կմ գազատարը, ափամերձ կառույցները, որոնցից միայն 66-ն է օրինական: «1609 կառույց անօրինական է», նկատում է Վլադիմիր Մովսիսյանը:

Հանրապետության նախագահին հանձնաժողովը առաջարկ է ներկայացրել 3 տարով դադարեցնել ձկնորսությունը, որը հնարավորություն կտա վերականգնելու լճի ձկնային պաշարները: Առաջարկը նախագահի հավանությանն արժանանալու դեպքում կքննարկվի կառավարությունում:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# Ղարաբաղյան հարցը՝ առաջընթաց գրանցո՞ղ

*1-ին էջից*

«Հիմնարար սկզբունքները, ի թիվս այլոց, կոչ են անում. Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողության տակ, Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ՝ անվտանգության եւ ինքնակառավարման երաշխիքների տրամադրմամբ, Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միջանցք, Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշում իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության միջոցով, բոլոր ներքին տեղահանված անձանց եւ փախստականների՝ իրենց նախկին մշտական բնակության վայրերը վերադառնալու իրավունք եւ անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղապահ գործողություն», նշվում է հայտարարության մեջ:

Թե Բեռնար Ֆասիեի նշած մոտ 15 սկզբունքները ինչ բաշխվածություն ունեն այս համատեքստում եւ արդյոք դրանցից իրապես համաձայնեցման եզրին են միայն 2-3-ը այն դեպքում, երբ մյուսների առնչությամբ նոր-նոր միջնորդները ցանկանում են նոր քննարկում նախաձեռնել, ցույց կտա ժամանակը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների հայտարարությունն ավարտվում է հույսով, որ «Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից այս հիմնարար սկզբունքների սատարումը թույլ կտա մշակել համապարփակ կարգավորման ծրագիր՝ ուղղված Հայաստանի, Ադրբեջանի եւ ամբողջ տարածաշրջանի համար խաղաղ, կայուն ու բարգավաճ ապագայի ապահովմանը»:

Այս հայտարարությամբ առաջին անգամ ընդհանրացված ներկայացվում են այն թեմաները, որոնք քննարկվում են, սակայն չեն առանձնացվում սկզբունքները: Միեւնույն ժամանակ, ասվածում նորություն չկա, բայց դրա փոխարեն հայտարարության պաշտոնական մակարդակն այնպիսի բարձրությամբ է ապահովված, որ չի կարող շարքային ու աննշան համարվել:

ՀԱՂՊԱՏԻ ՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

# Եվս մեկ քայլ Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման բնագավառում

Հուլիսի 11-ին Հաղպատի վանքային համալիրի տարածքում տեղի ունեցավ «Ճանաչենք հայկական հուշարձանները» ծրագրով պատրաստված բազմալեզու բացօթյա տեղեկատվական 6 վահանակների տեղադրման շնորհանդեսը: «Վիվասել-ՄՏՍ» ԲԲԸ-ի, USAID/CAPS-ի, Գյումրիում Իտալիայի պատվո հյուպատոսի ֆինանսական աջակցությամբ եւ AMAP (Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր) մշակութային հասարակական կազմակերպության հովանավորությամբ կազմակերպված միջոցառումն սկսվեց աղուհացի օրհնությամբ՝ ձեռամբ Հաղպատի վանքի հոգեւոր հովիվ Ասպետ վարդապետ Բալյանի: Հայր Ասպետը ողջունեց բոլորի ներկայությունը, ապա ողջույնի խոսք ասաց Հաղպատի գյուղապետ Սերգո Քառյանը՝ շնորհակալություն հայտնելով ծրագրի աջակիցներին ու հովանավորներին: Հաղպատի վանքի բակում կատարվեց ծառատունկի արարողություն՝ «Վիվասել-ՄՏՍ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի, նշված կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:



Հայկական հուշարձանների ճանաչման ծրագրի նախագահ Ռիկ Նայը եւ ծրագրի համահիմնադիր Ջոն Հյուզը իրենց ուրախությունն արտահայտեցին օրվա խորհրդի առիթով՝ հույս հայտնելով, որ վահանակների վրա տեղադրված տեղեկատվությունը հասկանալի եւ հասանելի կլինի բոլորին: Նշելով, որ ծրագրի աշխատանքային գործընկեր՝ ՀՀ մշակույթի նախարարությունը եւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը, ՀՀ տրանսպորտի նախարարությունը մեծապես օժանդակում են այս գործին, նրանք տեղեկացրին, որ սա այս տարի արդեն վեցերորդ հուշարձանն է: 2009 թ. ծրագրում ընդգրկվել է եւս 14 հնավայր: Արդեն հատուկ վահանակներով նշվում է Հայաստանի Մետաքսի ճանապարհը՝ Վրաստանից մինչեւ Իրան:

Ռիկ Նայը, ի թիվս աջակիցների, շնորհակալություն հայտնեց նաեւ Հայկական «Կանաչ խաչ» բնապահպանական հասարակական կազմակերպությանը (գործադիր տնօրեն՝ Գագիկ Ամիրյան)՝ տարածքը կանաչապատելու եւ Սայաթ-Նովայի հիշատակին կազմակերպված ծառատունկին եղեւնու տնկի տրամադրելու համար:

Ներկաներին ողջունեց եւ ծրագրի կարեւորությունը շեշտեց Լոռու փոխմարզպետ Աղվան Վարդերեսյանը՝ բոլորին փոխանցելով մարզպետ Արամ Քոչարյանի ողջույնը:

Հուշարձանների պաշտպանության միջազգային ICOMOS կազմակերպության Հայաստանի մասնաճյուղի նախագահ Գագիկ Գյուրջյանը, Գյումրիում Իտալիայի պատվավոր հյուպատոս Անտոնիո Մոնտալտոն շեշտեցին Հաղպատի պատմամշակութային հուշարձանի համամարդկային արժեքը՝ նշելով, որ UNESCO-ի պարտադիր պահանջն է՝ համաշխարհային ժառանգության արժեքները նաեւ տեղեկատվությամբ ներկայացնել, եւ վահանակների տեղադրումն այս առումով խիստ կարեւոր է:

«Վիվասել-ՄՏՍ» ԲԲԸ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանն իր հպարտությունը հայտնեց հայկական մշակութային բարձր արժեքների առիթով: «Հաղպատի նման վայրը հայկական մեր ինքնության արտահայտումն է, հետեւաբար ամեն գնով պիտի պահպանենք այսպիսի վայրերը», ասաց նա:

Հնչեցին Սայաթ-Նովայի ստեղծագործությունները՝ երգ երաժշտության եւ ասմունքի տեսքով:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

# «Շրջիկ գինեկոլոգ» համակարգը նպաստում է ծնելիության տոկոսի աճին

**Հայաստանում 2000 թ. արձանագրվեց մայրական մահացության ամենաբարձր ցուցանիշը՝ 61 դեպք 100.000 կենդանի ծնունդների հաշվով: Այդ ցուցանիշն անմիջապես ստացավ իր արձագանքը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) «Սեռական եւ վերարտադրողական առողջության բարելավման» ծրագրում: Հենց այդ ծրագրի համար 2002-ին ներդրվեց անդրանիկ «Շրջիկ գինեկոլոգ» համակարգը Արարատի մարզում՝ նպատակ ունենալով բարելավելու գյուղական շրջանում մատուցվող ծառայությունների որակը, դրանց մատչելիությունը, ինչպես նաեւ բարձրացնելու մանկաբարձուհիների մասնակցությունը ծառայությունների մատուցմանը: Մարզում ներդրված համակարգը սպասարկում է 91 գյուղական համայնք եւ մինչեւ օրս իրականացվել է շուրջ 400 այց: Տրամադրված շտապօգնության մեքենան համալրված է բոլոր անհրաժեշտ սարքավորումներով, մեկ գինեկոլոգ եւ մեկ սոնոգրաֆիստ մասնագետներով, որոնք շաբաթը մեկ անգամ շրջայց են անցկացնում մարզի համայնքներում ապրող հղիներին, հետազոտում, ու եթե անհրաժեշտ է լինում, ուղեգրում համապատասխան բուժհաստատություն հետազոտման, բուժման, ծննդաբերելու:**

**Նման 2 շտապօգնության մեքենաներ են տրամադրվել Սպիտակ եւ Արմավիր քաղաքների ծննդատներին: Համակարգը ընդլայնել է իր գործունեությունը հանրապետության հինգ մարզերում, եւ 2008 թվականին նկատվեց մայրական մահացության ցուցանիշի քառակի անկում: Առաջիկայում համակարգը կներդրվի նաեւ Վարդենիսում (Գեղարքունիքի մարզ):**

**Բնակչության համաշխարհային օրվա կապակցությամբ ՄԱԲՀ-ի հայաստանյան գրասենյակը լրագրողների հետ այցելեց Արարատի մարզ, Ավշարի ամբուլատորիա, որտեղ ներդրված է «շրջիկ գինեկոլոգ» համակարգը, որը տարեկան նախածննդաբերական խնամքի ծառայություններ է մատուցում մոտ 6000 կանանց:**

**Ինչպես նշեց ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մանկաբարձ, գինեկոլոգ Ռազմիկ Աբրահամյանը, որը նաեւ «Վերարտադրողական առողջության ազգային ծրագրի» տնօրենն է, «Խորհրդային համակարգի փլուզումից հետո վատթարացան վերարտադրողական առողջության ցուցանիշները եւ հատկապես նկատվեցին ծնելիության, բնական աճի անկում, հիվանդությունների շատացում: Այդ նպատակով ստեղծվեց ազգային ծրագիր, որի նպատակն էր հղիության հսկողությունը բարելավել: Մինչեւ այժմ տրամադրված 9 «շրջիկ գինեկոլոգ» շտապօգնության մեքենաները իրականացնում են շատ կարեւոր խնդիր, զգալի չափով նպաստել է ծննդօգնության ցուցանիշների բարելավմանը»:**

**Եթե համեմատելու լինենք, ապա զգալի բարձրացել է ծնելիությունը, 2007 թ. եղել է 40.000 ծննդաբերություն, իսկ 2008-ին՝ 41.500, իջել է մայրական եւ պերինատալ մահացության թիվը: Այս համակարգը անհրաժեշտ է ներդնել ողջ հանրապետությունում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, նշում էր սոնոգրաֆիստ Տիկին Գրիգորյանը. «բավականին շատ են սպառնացող վիժումները, սթրեսները, սակավարյունություններ ունեցողները, ռիսկի խմբի հղիները եւ այլն: Իսկ այդ բոլոր պաթոլոգիաները կապված են մոր առողջության հետ եւ սոցիալական վիճակի, անկանոն սննդի հետ: Իսկ դրանք ժամանակին բուժելու ու կանխելու համար ՀՀ առողջապահության նախարարության ներդրած «Ծննդօգնության հավաստագիրը» շատ կարեւոր նշանակություն ու դեր ունեցավ»:**

**«<u>Ազգը</u>» Ավշարի ամբուլատորիայի թերապեւտ Վերդիկ Հարությունյանից տեղեկացավ, որ այս տարվա սկզբից արդեն 70 հղի ծննդաբերել են եւ դեռ գրանցված 39 սպասում են մանկան ճիչին, որը նախորդ տարվա հետ համեմատած մոտ 10 հղիով ավելին է:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 7/13/2009 10:12 PM Page 1



# ՀՅԴ համաժողովն առաջարկեց իշխանությանը չստորագրել առաջարկվող փաստաթուղթը

ՀՅԴ Հայ դատի հանձնախմբի կազմակերպած երկօրյա խորհրդաժողովի եզրափակումն ընթացավ բուռն քննարկումներով: Պահանջը մեկն էր՝ ինքնավստահություն, հեռատեսություն եւ քաղաքական կամք ՀՀ եւ ԼՂՀ իշխանություններից: Ամենայն հավանականությամբ դաշնակցականները մտադրվել էին խորհրդաժողովն անցկացնել մինչ մոսկովյան հանդիպումն ու նախագահ Սերժ Սարգսյանին մեսիջ ուղարկել Արցախյան հիմնահարցի վերաբերյալ՝ կտրուկ ու ոչ հայանպաստ գործողություններ չկատարել: Սակայն մինչ Ստեփանակերտում աշխարհի 25 երկրից հրավիրված բազմաթիվ ներկայացուցիչներ քննարկում էին երկու կարեւորագույն հարցեր, Իտալիայում նախագահներ Օբաման, Մեդվեդեւն ու Սարկոզին հանդես եկան Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին ուղղված հորդորով՝ կարգավորել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը:

Ինչեւէ, տեղյակ լինելով «Մեծ ութնյակի» երկրների հայտարարության մասին, խորհրդաժողովի մասնակիցները բաժանվեցին երկու մեծ խմբի՝ քննարկելու հայ-թուրքական հարաբերություններն ու արցախյան հիմնահարցը: Մի քանի ժամ տեւած բուռն քննարկումներից ծնվեց բանաձեւ, որը խորհրդաժողովի մասնակիցներին ներկայացրեց ՀՅԴ բյուրոյի անդամ Աղվան Վարդանյանը:

Հայ-թուրքական հարաբերությունների առումով համաժողովականների տեսակետը հետեւյալն է. «Առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ սկսելու եւ սահմանները բացելու Հայաստանի նախաձեռնությունը արդեն իսկ զիջում էր եւ բարի կամքի դրսեւորում Թուրքիայի նկատմամբ: Թուրքիան համարժեք չի արձագանքել Հայաստանի միակողմանի պատրաստակամությանը: Թուրքիայի ոչ մի առաջնորդ հրապարակավ չի խոսել առանց նախապայմանների հարաբերությունները կարգավորելու ցանկության մասին: Թուրքիան շարունակում է նախապայմաններ թելադրել, մեծացնում է իր բացահայտ կանխակալ դերակատարությունը: Իրականում գնում է ոչ թե հարաբերությունների կարգավորման, այլ հաջողությամբ մոլորեցնում միջազգային հանրությանը՝ օրակարգից դուրս մղելով հայկական հարցը»:

Քննարկելով ապրիլի 22-ի Հայաստանի եւ Թուրքիայի արտգործնախարարությունների հայտարարությունները, համաժողովականներն այն բնորոշեցին սխալ եւ անհեռատես քայլ: Այս ամենի համատեքստում ներկայացրին մի շարք դրույթներ. «Բարիդրացիական հարաբերություններ կարող են լինել միայն Հայոց ցեղասպանության ճանաչմամբ եւ հայ ժողովրդի իրավունքների վերականգնմամբ: Անթույլատրելի է ցեղասպանության փաստը պատմաբանների քննարկման նյութ դարձնելու ցանկացած փորձ: Հայաստանի իշխանությունները պարտավոր են վերագնահատել ու իմաստավորել մեկ տարի առաջ իրենց նախաձեռնած հրապարակային հարաբերությունների ընթացքը, միջազգային հանրության առաջ բացահայտել Թուրքիայի իրական նպատակներն ու դադարեցնել բանակցությունները»:

Արցախյան հիմնահարցի ներկա հանգրվանի առնչությամբ համաժողովն արձանագրեց. «Արցախյան հիմնահարցի վերջնական կարգավորման ուղին խաղաղ բանակցային գործընթացն է, որտեղ պետք է փոխվի խեղված ձեւաչափը եւ ԼՂՀ-ն հանդես գա որպես բանակցային կողմ: Բանակցային գործընթացում պետք է առաջնորդվել 1991 թ. անկախության եւ 2006 թ. ԼՂՀ սահմանադրության ընդունման հանրաքվեների արդյունքներով: Բանակցությունների նպատակը պետք է լինի առաջնահերթ լուծել ԼՂՀ անկախության ճանաչման եւ անվտանգության ապահովման հարցերը: Փոխզիջումները կարող են լինել միայն համարժեք, միաժամանակյա եւ տեղադրվել փաթեթային ամբողջական լուծման համակարգում: Այս համատեքստում, նորացված մադրիդյան սկզբունքների հիման վրա հակամարտության կարգավորումը արագացնելուն ուղղված համանախագահող երկրների նախագահների կոչը բացարձակապես չի բխում հիմնախնդրի բնույթից»:

Խորհրդաժողովից հետո կայացած բրիֆինգի ժամանակ դաշնակցական **Կարո Արմենյանը** նկատեց, որ շարունակելու են ճնշումները հայ իշխանությունների վրա հատկապես «Մեծ ութնյակի» կատարած հայտարարությունից հետո: «Հայաստանի վերջին մեկուկես տարվա արտաքին քաղաքականությունն ու ֆուտբոլային դիվանագիտությունը անընդունելի են, որի հետեւանքով կարծիք է ստեղծվում, որ միակ շահող կողմը Թուրքիան է»:

Մեկ այլ դաշնակցական՝ **Լեւոն Մկրտչյանն** էլ նկատեց, որ մի քանի օրից տեղի կունենա ԳՄ համագումար, կքննարկվեն ներկա արտաքին իրավիճակը, «Մեծ ութնյակի» հայտարարությունն ու ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հրաժարականի հարցը: «Խորհրդաժողովի ընթացքում հնչեց արտաքին գործերի նախարարի հրաժարականի պահանջը: Այդ հարցը կքննարկվի մի քանի օրից ու հստակ կներկայացնենք մեր դիրքորոշումը այդ հարցի առնչությամբ: Համանախագահների հայտարարությունը աննախադեպ էր, առաջին անգամ երեք երկրների նախագահներն այսպիսի մակարդակով հայտարարություն կատարեցին: Հայտարարությունն այնքան էլ մտահոգիչ չէ, որքան կոչը: Բանակցային գործընթացի հիմնական հատվածը՝ Ղարաբաղի անկախության ճանաչման հիմնախնդիրը, վերջին հայտարարության մեջ բացակայում է: Սա հստակ վեկտոր է, որ պահանջում է ուժերի միավորում: Կլինի նաեւ ԼՂՀ համապատասխան արձագանքը, որովհետեւ բանակցային գործընթացում նոր փուլ է նշանավորվում»:

### «Մեծ ութնյակի» հայտարարության մասին

Դաշնակցական **Վահան Հովհաննիսյանը** գովելի է համարում, որ «Մեծ ութնյակի» գագաթաժողովում համանախագահներն անդրադարձել են ղարաբաղյան հիմնահարցին. փաստորեն մեծ է հարցի կարեւորությունը: «Բայց մեզ համար ընդունելի են փոխզիջումները միայն այն ժամանակ, երբ Ադրբեջանը փոխզիջումների պատրաստակամության մասին հստակ ասի: Փոխզիջումները պետք է լինեն միաժամանակյա եւ չպետք է հիմնվեն ԼՂԻՄ հասկացության վրա: Անցել է 20 տարի եւ ղարաբաղյան ժողովուրդը երկու կարեւոր հանրաքվեներով ամրապնդել է իր ինքնորոշումը: Ոչ մեկին թույլատրված չէ սա անտեսել»: Հովհաննիսյանը «Մեծ ութնյակի» հայտարարած «Ղարաբաղյան հարցը արագ լուծելու մեջ» արտահայտությունում հայկական կողմի շահը չի տեսնում: Նա նկատում է, որ այս հայտարարությունը կապ ունի ոչ միայն Օբամա-Մեդվեդեւ հանդիպման, այլեւ հայ-թուրքական հարաբերությունների զարգացման հետ:

ԼՂՀ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հասարակական խորհրդի նախագահ **Մասիս Մայիլյանն** էլ նկատեց, որ վերոնշյալ հայտարարությունը շատ քիչ է տարբերվում տարբեր մակարդակներում եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացին աջակցող միջազգային կազմակերպությունների նախկինում հնչեցրած հայտարարություններից: Ըստ Մայիլյանի, ուշագրավ փաստ է, որ համանախագահները կոչ են արել ավարտել հակամարտության կարգավորման որոշակի սկզբունքների համաձայնեցումը:

«Հրապարակված հիմնարար սկզբունքների ընդունման եւ իրագործման դեպքում անուղղելի վնաս կհասցնեն ԼՂՀ եւ ՀՀ ազգային շահերին: Ակնհայտ է, որ հակառակորդին տարածքների հանձնումը ուժեղ բարոյական հարված կլինի հայ ժողովրդի համար»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ստեփանակերտ-Երեւան

ՀԻՊՈԹԵԿԱՅԻՆ ՇՈՒԿԱ

# «Հարմար պահն է անշարժ գույք գնելու»

*Ազգային հիպոթեկային ընկերության գործունեության մասին խոսելով՝ համոզմունք հայտնեց ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը*

Ազգային հիպոթեկային ընկերության հիմնադրման կապակցությամբ երեկ Կենտրոնական բանկում տեղի ունեցավ ԿԲ նախագահ **Արթուր Ջավադյանի**, ընկերության գործադիր տնօրեն **Մհեր Եղիազարյանի** մամուլի ասուլիսը, որին մասնակցում էր նաեւ ընկերության հետ մի քանի օր առաջ առաջին պայմանագիրը կնքած «Հայբիզնեսբանկի» վարչության նախագահ **Արա Կիրակոսյանը**:

Ինչպես հայտնեց Արթուր Ջավադյանը, ընկերության ստեղծման նպատակը հիպոթեկային շուկայի զարգացումն է եւ վարկերի ստացումն առեւտրային բանկերից մատչելի դարձնելը: Դրանք կլինեն երկարաժամկետ՝ 10 եւ ավելի տարիների հիպոթեկային վարկեր եւ ավելի ցածր ու մատչելի տոկոսներով: Ընդ որում, ԿԲ նախագահը շեշտեց, որ բանկերը ներկայումս հնարավորություններ ունեն տրամադրելու նաեւ բիզնես եւ այլ վարկեր ավելի ցածր տոկոսներով: Այս առնչությամբ Արթուր Ջավադյանը հայտնեց, որ անցյալ եւ այս շաբաթների ընթացքում նկատվել է վարկային ծավալների մեծ աճ եւ տոկոսադրույքների նվազում:




Մհեր Եղիազարյանն ասաց, որ բացի «Հայբիզնեսբանկից», ընկերությունը առաջիկայում վերաֆինանսավորման պայմանագիր է կնքելու 2 այլ բանկերի հետ: ԿԲ նախագահն ավելացրեց, որ ընկերության հետ նման պայմանագիր կկնքեն Հայաստանի գրեթե բոլոր բանկերը (բացառությամբ 2-3-ի), որոնք կհամապատասխանեն պահանջվող չափանիշներին: Ընկերության կապիտալը ներկայումս 17 մլրդ դրամ է, որից 5 մլրդ դրամը Գերմանա-հայկական հիմնադրամի կողմից է տրվել, իսկ 12 մլրդ դրամը՝ վերջերս Հայաստանի ստացած խոշոր վարկերից:

«Տոկոսադրույքների իջեցումը որքա՞ն նկատելի կլինի եւ կանխավճարի որքան չափ ընկերությունը բանկերի համար սահմանե՞լ է», «**Ազգի**» հարցերին պատասխանելով, Արթուր Ջավադյանը նշեց, որ ինքը չի կարող ասել, թե որքանով կիջնեն տոկոսադրույքները, բայց դրանք կիջնեն մի քանի տոկոսով: Փոքր-ինչ ուշ ԿԲ նախագահը տեղեկացրեց, որ ընկերությունը բանկերին վարկը տրամադրելու է 9 տոկոսով: Այնուհետեւ Մհեր Եղիազարյանն ասաց, որ հիպոթեկային վարկի տրամադրման կանխավճարի չափը սահմանել է Գերմանա-հայկական հիմնադրամը՝ այն չպետք է գերազանցի 30 տոկոսը:

«Հայբիզնեսբանկի» վարչության նախագահ Արա Կիրակոսյանը տոկոսադրույքների վերաբերյալ ասաց, որ իր ղեկավարած բանկի առաջարկած հիպոթեկային վարկերի տոկոսադրույքները կիջնեն աշնանը եւ կլինեն 4-5 տոկոսով ցածր, քան այժմ է:

ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, մեկ այլ հարցի պատասխանելով, տեղեկացրեց, որ մեկ վարկի առավելագույն լիմիտը 12 մլն դրամից բարձրացվել է մինչեւ 20 մլն դրամի: Նա կոչ արեց ակտիվորեն օգտվել այս հնարավորություններից եւ դրանով իսկ պայքարել այն դեպրեսիվ երեւույթի դեմ, ըստ որի, մտածելով, որ գներն իջնելու են, մարդիկ ձեռնպահ են մնում բնակարան գնելուց: ԿԲ նախագահը տեղեկացրեց, որ անշարժ գույքի շուկայում գներն արտարժույթով արդեն իջել են մոտ 30 տոկոսով եւ ավելին այլեւս չեն իջնելու: Արթուր Ջավադյանի կարծիքով, հիմա անշարժ գույք ձեռք բերելու ամենահարմար պահն է, ինչին պատրաստ են նաեւ կառուցապատողներն ու անշարժ գույքի գործակալությունները:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# «ԼՂ-ի անկախության ճանաչումը չպետք է լինի ինքնանպատակ, այլապես կհայտնվենք Թուրքիայի կարգավիճակում»

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախագահ Գագիկ Ծառուկյանի մամլո խոսնակ **Խաչիկ Գալստյանը** երեկ «Հայացք» ակումբում անդրադարձավ ԲՀԿ առաջնորդի վերջին շրջանում կատարած պաշտոնական եւ աշխատանքային այցերին Բելառուս, Խորվաթիա, Բուլղարիա, Ռուսաստան:

Խաչիկ Գալստյանը մամուլում տեղ գտած հրապարակումներից նկատել է, որ շատերը նախանձում են ԲՀԿ առաջնորդին, բայց միեւնույն ժամանակ դժվարացավ պատասխանել, թե ինչու են նախանձում իր ղեկավարին: Ուղղակի նշեց, որ Ծառուկյանը իր արտասահմանյան կապերն օգտագործում է ի շահ երկրի, ի շահ ժողովրդի, հայկական արտադրատեսակների համար սպառման շուկաներ է փնտրում, ներդնողների ներգրավում:

Լրագրողներից մեկը հետաքրքրվեց, թե պարոն Ծառուկյանն ունի՞ իր անձնական «իմիջմեյքերը»՝ հագուստներն ընտրելու հարցում: Գալստյանը պատասխանեց, որ Ծառուկյանն ազատ է իր «անձնական հագուկապի ընտրության հարցում. նա կրում է այն, ինչ ցանկանում է: Ինքն ունի իր նախասիրությունները եւ առաջնորդվում է դրանցով»:

Մամլո խոսնակը հիշեցրեց, որ Գագիկ Ծառուկյանն ունի մի քանի կարգավիճակ, որոնք թույլ են տալիս պաշտոնական եւ աշխատանքային այցելություններ կատարել արտերկիր:

«Արտգործնախարարի հրաժարականի հարցը մեր քաղաքական օրակարգում այս պահին չկա», ասաց Խաչիկ Գալստյանը անդրադառնալով ԼՂՀ-ում կազմակերպված ՀՅԴ խորհրդաժողովի մի շարք մասնակիցների՝ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հրաժարականի պահանջին:

Խ. Գալստյանը նշեց, որ ղարաբաղյան հարցը միակն է, որի կապակցությամբ իշխանական վերնախավում կա լիակատար համաձայնություն:

«Ոչ մի իշխանություն ոչ մի գնով ի վնաս Ղարաբաղի ժողովրդի շահերի որեւիցե համաձայնագիր չի կարող կնքել: Սա մեր ժողովուրդը պետք է հասկանա, վստահի իշխանություններին եւ հանգիստ լինի: Որեւէ մարդ այս երկրում ի վնաս մեր ժողովրդի, մեր ազգային պետական շահերի ԼՂ-ի հարցում որեւիցե զիջում որեւիցե ուժի չի պատրաստվում անել», ասում է Խ. Գալստյանը հավելելով, որ մադրիդյան սկզբունքներն իրենց հայտնի չեն: Բայց ՀՀ ԱԳ նախարար Է. Նալբանդյանի մատնանշած այն կետերը, որ Հայաստանը ԼՂ-ի հետ պետք է ցամաքային սահման ունենա, լինեն անվտանգության երաշխիքներ, եւ կարգավիճակի հարցն առաջնային լինի, «Բարգավաճ Հայաստանին» բավարարող սկզբունքներ են:

Խ. Գալստյանի խոսքերով այսօր հասունացել է որպես բանակցային կողմ ԼՂ-ին ներգրավելու անհրաժեշտությունը, եւ հիմնարար սկզբունքներում երկու երկրների նախագահների համաձայնությունից հետո հաջորդ հարցն էլ դա պետք է լինի:

Ինչ վերաբերում է Հայաստանի կողմից ԼՂՀ-ի անկախության ճանաչմանը, ապա, ըստ Խ. Գալստյանի, տրամաբանական է, որ Հայաստանն այս պահին չի ճանաչում. «Մենք պետք է նայենք նախադեպերը: Հայաստանի կողմից ԼՂ-ի անկախության ճանաչումը չպետք է լինի ինքնանպատակ: Այլապես մենք կհայտնվենք Թուրքիայի կարգավիճակում, որը միակ երկիրն է, որ պաշտոնապես ճանաչել է Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը: Դա ինչ է տվել թուրքական դիվանագիտությանը, կարծում եմ, զրո միավոր: Եվ այդ զրո միավորը Հայաստանը չի պատրաստվում ստանալ»:

Ներքաղաքական խնդիրներից. Ռոբերտ Քոչարյանի՝ քաղաքականություն վերադառնալու դեպքում ԲՀԿ-ն նրա հետ կհամագործակցի՞, թե՞ կմնա կոալիցիայի կազմում. այս հարցին Գալստյանը պատասխանեց. «ԲՀԿ-ն վաղուց ապացուցել է, որ ինքնուրույն քաղաքական ուժ է եւ ոչ մի կապ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ չունի: Եթե Ռոբերտ Քոչարյանը որոշի մտնել ակտիվ քաղաքականություն, դա իր որոշելիք խնդիրն է: ԲՀԿ-ն վաղուց որդեգրել է ինքնուրույն քաղաքական ուղեծիր եւ մեր որոշում ընդունող կենտրոնը ԲՀԿ քաղխորհուրդն է՝ նրա նախագահ Գագիկ Ծառուկյանի ղեկավարությամբ»:

Ն. Մ.

AZG NEW 4.QXD 7/13/2009 9:50 PM Page 1



# Դրական կրող

# Ջինսի արտադրությունը Ջավախքում նախագծերից միայն մեկն է

## *«Ջավախքը զարգացող ու հանգիստ տարածաշրջան է, ասվող վատը վախեցնում է ներդնողներին», ասում է գործարար Արամ Սանոսյանը*

Վրաստանի Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի մասին բազմիցս եւ ավելի հաճախ խոսվում է այն տոնայնությամբ, թե իրավիճակը այդ տարածաշրջանում դժվարությունների ու անլուծելի խնդիրների կուտակում է, ինչպես նաեւ հայաթափության քաղաքականության հետեւանք են հայաբնակ այս հատվածում բնակչության թվի զգալի նվազումն ու խոչընդոտների այն քանակը, որ առկա են հայերի բարձրացրած հարցերի առումով՝ որպես փոքրամասնության: Բայց դրականն էլ կա Ջավախքում, ու այդ մասին տեղեկացնելը եւս անհրաժեշտություն է, քանի որ լավ օրինակների մասին հրապարակումները ոգեւորության աղբյուր են հենց լավը ստեղծողների համար: Այս հոդվածում խոսքը Ջավախքում ջինսե հագուստի արտադրություն հիմնած **Արամ Սանոսյանի** գործունեության մասին է:

Ջինսե հագուստի արտադրությունը պատկերացնելի է տարբեր երկրների պարագայում, բայց կովկասյան արտադրության ջինսի մասին խոսելիս դժվար է չհավատացողի ժպիտ չառաջացնել: Սակայն փաստն այն է, որ այդպիսի արտադրություն կա, այն էլ Ջավախքում՝ **«ԱրամԱնի»** ապրանքանիշով:

Շուշանիկ Գալոյանն ու Արմենուհի Իրիցյանը Նինոծմինդայի բնակիչ են, աշխատում են «ԱրամԱնի» ֆաբրիկայում որպես հսկիչ: 28-ամյա Շուշանիկը մեկ տարի է աշխատում, բայց արդեն ստանում է 300-350 լարի աշխատավարձ, որ Ջավախքում բավականին լավ վարձ է՝ մոտ 200 դոլար: Երկու փոքրիկ ունի, ամուսնու հետ համատեղ կարողանում են իրենց ապրուստը հոգալ: 25-ամյա Արմենուհին էլ այրի է, 5-ամյա զավակ ունի, որ մնացել է միայն իր եւ իր ծնողների խնամքին, ուստի ֆաբրիկայում աշխատանքը իր երեխայի կարիքները հոգալու եզակի հնարավորությունն է: «Մեծ հաճույքով ենք գալիս աշխատանքի, այստեղ լավ են մթնոլորտը, մարդիկ, ինձ համար կարեւոր է նաեւ, որ տնից դուրս եմ գալիս, շփվում մարդկանց հետ»:

Թբիլիսիի «Բախտրիոն» ֆաբրիկայի Բոգդանովկայի, ներկայիս Նինոծմինդայի մասնաճյուղը, որ հիմա հայտնի է որպես «ԱրամԱնի» ֆաբրիկա, չէր գործել արդեն 20 տարի: Նախկինում 800 աշխատատեղ ունեցող անմխիթար վիճակում գտնվող ֆաբրիկան վերանորոգվել է եւ մեկ տարուց ավելի աշխատելով ունի արդեն 250 աշխատող, սեփականատերը Ռուսաստանի Տյումեն քաղաքից Ջավախք վերադարձած Արամ Սանոյանն է, որ հիմնել է «ԱրամԱնի» ապրանքանիշը ներկայացնող «Սաթախս» ընկերությունը: 3,5 մլն դոլար ներդրմամբ ոչ միայն վերանորոգվել է ֆաբրիկան, այլեւ ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ, որոնցով աշխատելու հմտություն շատ արագ են ձեռք բերում աշխատակիցները:

Սահականուշ Եսոյանը ֆաբրիկայի մեծապես երիտասարդ աշխատակազմի այն եզակի աշխատողներից է, որ քսան տարի ընդմիջումից հետո նորից ֆաբրիկա աշխատանքի է գնում: 53-ամյա Սահականուշը «ԱրամԱնիի» բացման օրից բրիգադիր է պատրաստի ջինսերի փաթեթավորման արտադրամասում: Մասնագիտությամբ կարող-ձեւող է: «Ֆաբրիկան շատ մեծ նշանակություն ունի տեղի բնակչության համար, քանի որ Նինոծմինդայի բնակչության երեւի միայն հինգ տոկոսն է աշխատում, մնացածը լավագույն դեպքում զբաղվում են գյուղատնտեսությամբ: Իմ աղջիկը եւս այստեղ կարող բանվորուհի է աշխատում», պատմում է Սահականուշը:

Եղիշե Պոտոլյանը 22 տարեկան է, արդեն տարուց ավելի աշխատում է ֆաբրիկայում, զուգահեռաբար հասցրել է ավարտել Սանկտ Պետերբուրգի իրավաբանական ինստիտուտի մասնաճյուղը Երեւանում: Եղիշեն ձեւող մեքենայի օպերատորն է, գոհ է աշխատանքից ու վարձատրությունից, ընդգծելով, որ լավ աշխատելու դեպքում բարձրացվում է աշխատավարձը, համ էլ պարգեւատրումներ են լինում:

«Սկզբում որ եկա այստեղ, դուր չեկավ աշխատանքը, հիմա արդեն հմտացել եմ ու շատ գոհ եմ: Իմ աշխատանքը պատասխանատու է, քանի որ ամենափոքր սխալն իսկ մեծ վնաս կարող է հասցնել ընդհանուր աշխատանքին, նաեւ մեծ գումար կարժենա»: «Չգիտեմ՝ կմնամ այստեղ մոտ ժամանակներս, թե ոչ, բայց հաստատ վերադառնալու եմ. իմ երկրից լավը չկա», այսպիսին է երիտասարդ ջավախքցու մոտեցումը:

### Ջինսի արտադրություն, եւ ոչ միայն

«Չկա հայ, որ չուզենա վերադառնալ հայրենիք, չկա նման ջավախքցի: Խնդիրն այն է, թե դրսում ոնց են կարողանում աշխատել: Ես կարողացա իմ բիզնեսը պահպանել Ռուսաստանում, ձեռնարկություններս աշխատում են, ու ես տեղափոխվեցի Երեւան, բայց աշխատանքի բերումով ավելի շատ լինում ենք Նինոծմինդայում: Մեկ տարուց ավելի այստեղ եմ, ու չեմ մտածում ընտանիքով նորից գնալ Ռուսաստան: Ջավախքում ապրելու եւ աշխատելու լավ հնարավորություններ կան», ասում է «ԱրամԱնիի» սեփականատեր Արամ Սանոսյանը:



Արամ Սանոսյան

«Ներկա պահին պետպատվերներ ենք կատարում՝ վերնաշապիկի մեծ խմբաքանակ՝ 75 հզ. հատ, եւ 12 հզ. բաճկոն Վրաստանի ՆԳՆ պատվերով: Դա ընդհանուր առմամբ մոտ 1,5 մլն դոլարի պատվեր է: Դրա հետ մեկտեղ մեր արտադրանքի հիմնական ուղղվածությունը ջինսի հագուստն է: Պահեստավորված ունենք 30 հզ. միավոր հագուստ, որի վաճառքը սկսել ենք հիմնականում Վրաստանում: Շուտով խմբաքանակներ կարտահանվեն նաեւ Հայաստան եւ կսկսենք վաճառքը: Ունենք ջինսի հագուստի պատվերներ Ուկրաինայից, պայմանագրեր ունենք հենց Վրաստանում, 10 հզ. ջինս անդրավարտիքի պայմանագիր էլ կնքել ենք հայաստանյան մի ընկերության հետ: Մեր ապրանքը մեծ հետաքրքրություն է առաջացրել տարածաշրջանում, եւ հուսով ենք, որ կգա մի ժամանակ, երբ կհասնենք այս ֆաբրիկայի նախկին հնարավորություններին՝ աշխատողների թիվը հասցնելով 800-ի», Սանոսյանի առօրյան այսպիսին է:

Միջին աշխատավարձը 300 լարի է, բանվորների հետ գործարքային է, կան բանվորներ, որոնք վարձատրվում են մինչեւ 350 լարի: «Առաջին օրերին մեր աշխատավարձը չէր անցնում 150 լարիից, քանի որ մարդիկ դեռ հմուտ չէին, հիմա գրեթե կրկնապատկվել է բանվորների աշխատավարձը իրենց արտադրողականության բարձրացման շնորհիվ», ներկայացնում է Արամ Սանոսյանը:

Նինոծմինդայում գործող «ԱրամԱնի»-ի հիմնադիրն ու սեփականատերը նաեւ մեծածախ շուկա է կառուցում Ախալքալաքում: Սանոսյանի խոսքերով. «Այսօր Ջավախքում մեծ ծավալով շինարարություն է իրականացվում, ճանապարհներն են կառուցվում, Թբիլիսի-Կարս երկաթգիծը, եւ լինելով ճանապարհների խաչմերուկում՝ Թբիլիսի-Կարս, Երեւան-Բաթում, մտածեցինք անպայման ունենալ մեծածախ առեւտրի կենտրոն, որը կարող է ժամանակի ընթացքում Թուրքիա, Ռուսաստան, Վրաստան, Հայաստան, Ուկրաինա, Ադրբեջան երկրների կապող օղակի դեր ստանձնել իր ձեռքի մեջ»:

Շուկայի ուղղվածությունը լինելու է բազմաբնույթ՝ հագուստ, սննդամթերք, շինարարական նյութեր, արդեն 500 հայտ կա եւ, ինչպես ներկայացնում է Սանոսյանը, արդեն վախ կա, որ շուկայի տարածքը կարող է չհերիքել: Շուկայի շինարարության համար մոտ մեկ մլն դոլար է ներդրվել: Շուկան ջեռուցվում է, նման չի լինելու կոնտեյներային շուկաներին, այլ փակ եւ հարմարավետ:

Սանոսյանը Ջավախքում գործունեություն է ծավալում նաեւ շինարարության եւ գազի ոլորտներում: «2008-ի հունիս ամսին շահեցինք Ախալքալաքի եւ Նինոծմինդայի շրջաններում գազի մատակարարման տենդեր: Մասնակցում էին խոշոր կազմակերպություններ, մեր կազմակերպությունը ընտրվեց որպես տեղական: Այսօր գազի բարձր եւ միջին ճնշման խողովակների շինարարությունն արված է Ախալքալաք քաղաքում, որտեղ առկա է նաեւ ցածր ճնշման խողովակների 50 տոկոսը: Ախալքալաքի 2200 բաժանորդից, որոնցից մոտ 200-ը բացակայում է, 300-ն ունեն գազ: Բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների հայտերը առաջնահերթության կարգով ապահովել ենք, ծրագրում ենք նաեւ Նինոծմինդայի գազաֆիկացումը»:

«Ախալքալաքյան պանիր» նախկին ընկերությունը եւս դարձել է Սանոսյանի սեփականությունը, ու թեեւ ընկերության սեփականությունն են տարբեր փոքր արտադրամասեր տարածաշրջանում եւ դրանցից սեփականատերը որեւէ վարձ չի գանձում, Սանոսյանը պանիր արտադրել չի պատրաստվում: Պանրի արտադրություններ կան Ջավախքում տարբեր տեղերում, բայց փոքր մասշտաբներով, եւ եթե մեծ գործարան լինի, փոքրերը կվնասվեն:

### Ջավախյան բիզնեսի խնդիրները

Թե ինչ խնդիրներ ունի ջավախյան բիզնեսը, Սանոսյանը ներկայացնում է՝ սկսելով մեծ քաղաքների հեռավորությունից: «Մենք ունենք շատ աշխատասեր ժողովուրդ, ուստի մարդկային գործոնը խնդիր չէ: Մինչդեռ մեծ քաղաքներից հեռու ենք, Ջավախքի ճանապարհներն էլ կառուցված չեն, թեեւ ընթացքի մեջ են», նշում է Սանոսյանը, ավելացնելով, որ բիզնեսի համար առավել վատ են հարկային եւ այլ պետական ծառայությունների հետ խնդիրները:



«Վրացական պետությունից մենք այսօր պատվեր ունենք, դա նշանակում է մեր գործունեության սկզբում ապրանքի իրացման խնդիր չունենալ եւ ժամանակ ունենալ ճանաչում ձեռք բերելու շուկայում: Մենք լուրջ պայմանագրեր ունենք Ուկրաինայի հետ, որտեղ ո՛չ մի խնդիր չունենք ո՛չ արտահանման, ո՛չ հարկերի հետ կապված: Այդպիսի խնդիրներ չկան նաեւ Վրաստանի ներսում: Վերջերս ջինսերի մի փոքր խմբաքանակ ուղարկեցինք Հայաստան, եղան որոշ խնդիրներ մաքսայինի հետ, բայց հուսով եմ՝ կհարթվի», պարզաբանում է Սանոսյանը:

Ըստ նրա, միգուցե իրենց՝ Հայաստանի մաքսային դաշտի հետ աշխատելու փորձ չունենալն էր, բայց այնպես է ստացվել, որ Չինաստանից եւ Թուրքիայից Հայաստան ջինսերի արտահանման ժամանակ դրանք հաստատագրված գնով գնահատվում են համապատասխանաբար 8 դոլար եւ 13 դոլար, իսկ «ԱրամԱնի» ջինսերը գնահատվել են 18: «Կարծում ենք, դա թյուրիմացություն է, եւ մեր մասին Հայաստանում չգիտեն, միգուցե չեն հավատացել, թե դա կարող է լինել Ջավախքի արտադրանք: Երեւի մեր մարկետինգը պիտի այնպես արվեր, որ յուրաքանչյուր մաքսավոր տեղյակ լիներ մեր ապրանքից եւ անգամ կրեր, քանի որ այն որակյալ է», գտնում է Սանոսյանը: (Մաքսային օրենսդրության համաձայն, եթե ներմուծման փաստաթղթերում առկա են վաճառքի գինը եւ ծագման սերտիֆիկատ, մաքսային գանձումը կատարվում է այդ գումարից):

Սանոսյանի ներկայացմամբ. «Մեր ջինսը այդպիսի գնով մաքսազերծելով՝ չինական ապրանքի համար ավելի լավ պայմաններ են ստեղծում հայկական շուկայում: Նման պայմաններում մենք չենք կարող մրցել: Հայաստան 10 հզ. ջինս ներկրելու պատվիրատուն հրաժարվում է, քանի որ նման մաքսազերծումից հետո արտադրանքը դառնում է ոչ մրցունակ»:

Մինչդեռ Ջավախքին վերաբերմունք է պետք ցույց տալ: Եվ ընդհանրապես էլ, Արամ Սանոսյանը գոհ չէ Ջավախքը որպես խնդրաշատ ներկայացնելուց: «Ջավախքը հանգիստ տարածաշրջան է: Հայկական եւ վրացական, հատկապես ադրբեջանական ու ռուսական շատ լրատվամիջոցներ փորձում են Ջավախքը ներկայացնել չափազանց վատ գույներով: Միգուցե կան ուժեր, որոնց ձեռք չի տալիս Ջավախքի զարգացումը, բայց ես համոզված եմ, որ աշխարհի ամենահանգիստ անկյունը Ջավախքն է»:

Գործարարի համոզմամբ, վատ արտահայտությունները Ջավախքի հասցեին վախեցնում են ներդնողներին: «Պետք է այստեղ կատարվող լավը եւս նշել, այսօր իրոք Ջավախքը զարգանում է, կառուցվում են ճանապարհները, ներդնողներ են գալիս, բայց քիչ: Գոնե հայաստանյան ձեռնարկություններն իրենց մասնաճյուղերը բացեն Ջավախքում: Չինացիները արդեն հինգ խանութ ունեն Ախալքալաքում, եւ դա պատահական չէ: Որ ուշանանք, ուրիշները կգրավեն բոլոր ոլորտները: Ջավախքի զարգացման մեջ մեծ տեղ ունեն լրատվամիջոցները, որ ցույց տան լավը, ինչը ոգեւորում է մարդկանց», հույս է հայտնում Արամ Սանոսյանը:

### Ինչո՞ւ էին ուզում գաղութ կառուցել Ջավախքում

2007-ին Ջավախքում որոշվեց կառուցել աշխատանքային ուղղիչ գաղութ կամ կալանավայր: Դա Վրաստանի պետական ծրագիր էր, որի դեմ շատ բողոքներ հնչեցին, եւ կալանավայրը չկառուցվեց, մինչդեռ ծրագրված էր այն հիմնել Նինոծմինդայի շրջանի Սաղամո գյուղի հարեւանությամբ: Շինարարության պատվերը կատարելու առնչությամբ շոշափվում էր նաեւ Արամ Սանոսյանի անունը:

Այս առնչությամբ գործարարը հավաստում է, որ կալանավայրի անհրաժեշտությունը պայմանավորված էր Վրաստանում հատկապես կոռուպցիայի դեմ պայքարով, բանտարկյալների թիվը մոտ 5 հազարից հասել էր 20-25 հազարի: «Պետությունը կնքել էր պայմանագիր թուրքական մի ընկերության հետ շինարարության համար: Մեզ հաջողվեց համոզել իշխանություններին, որ այդ շինարարությունը կատարի տեղական ընկերությունը եւ աշխատեն մոտ 700 տեղացիներ: Պետությունը եթե ցանկանում է, կկառուցի անկախ ամեն ինչից, բայց չկառուցվեց, քանի որ վերջին ժամանակներում սկսեցին կալանքի փոխարեն տուգանքներ կիրառել, անհրաժեշտությունը վերացավ»:

Սանոսյանը վստահեցնում է, թե Վրաստանի ՆԳՆ-ի հետ ներքին համաձայնություն կար նաեւ, որ շինարարությունից հետո 500 հոգանոց պահակախումբը բաղկացած պետք է լիներ տեղացիներից: Մեզ համար շահույթի խնդիր չկար, այլ տեղացիներին աշխատանքով ապահովելու ցանկություն: Շինարարության վայրն էլ ընտրվել էր, քանի որ երկաթգծի մոտ էր, Սաղամո լճի ափից շատ հեռու, հեռու շրջկենտրոնից: Գործարարի խոսքերով, «Երեք տարի բանտի կառուցման խոսակցությունը գնում է, կարող էին այդքան մարդ աշխատանք ունենալ, մինչդեռ այդ երեք տարում ուրիշ ի՞նչ է արվել: Ոչինչ»:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Ախալքալաք-Նինոծմինդա-Երեւան**

AZG NEW 5.QXD 7/13/2009 9:50 PM Page 1



# Անկարան գոհ է ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահների հայտարարությունից

## *Իսկ Թուրքիայի արտգործնախարարությունն ընդգծում է մադրիդյան սկզբունքների կարեւորությունը*

Յուլիսի 10-ին ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահները, հանդես գալով համատեղ հայտարարությամբ, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը մադրիդյան հիմնարար սկզբունքներով կարգավորելու կոչ են արել ՀՀ նախագահին եւ նրա ադրբեջանցի պաշտոնակցին: Մադրիդյան սկզբունքները որպես հակամարտության կարգավորման տարբերակ, բացառում են ուժի կիրառումը, հիմք են ընդունում պետությունների տարածքային ամբողջականությունն ու ճանաչում են ժողովուրդների ինչպես իրավահավասարությունը, այնպես էլ ինքնորոշման իրավունքը, ընդ որում՝ հելսինկյան եզրափակիչ ակտի հիման վրա: Բայց եւ այնպես դրանք անտեսում են արցախահայության ձեռքբերումներն ու փոխզիջման քողի տակ միակողմանի զիջումներ են պահանջում հայկական կողմից:

Որքան էլ այդ սկզբունքներում հիշատակվի «կամարտահայտության» մասին, այնուամենայնիվ, անորոշ է մնում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Հակառակ դրան, միանգամայն որոշակի են հայկական կողմին ներկայացվող պահանջները կապված հարակից տարածքները Ադրբեջանին վերադարձնելու կամ փախստականների բնակության նախկին վայրեր վերադառնալու իրավունքի հետ: Այլ կերպ, մադրիդյան հիմնարար սկզբունքները չեն բխում հայ ժողովրդի, Հայաստանի, առավել եւս՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շահերից, հետեւաբար չեն կարող հայանպաստ լինել:

Թեեւ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի նախագահների հայտարարությունն ընդամենը կոչ է, այսինքն՝ պարտավորեցնող չէ, սակայն ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար հիմք է ընդունում մադրիդյան սկզբունքները, ուստի եւ չպետք է հայանպաստ համարվի: Այդ առումով թերեւս հատկանշական է ինչպես մադրիդյան հիմնարար սկզբունքներին, այնպես էլ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահների համատեղ հայտարարությանը Թուրքիայի արտգործնախարարության գնահատականը:

CNN-Turk-ի վկայությամբ, պաշտոնական Անկարան գոհունակությամբ է ընդունել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի նախագահների հայտարարությունը, իսկ Թուրքիայի արտգործնախարարությունը հուլիսի 11-ին հաղորդագրություն է տարածել հայտարարության առնչությամբ: Հաղորդագրության մեջ ընդգծվել է հակամարտության կարգավորման Մինսկի խմբի ջանքերի կարեւորությունը Թուրքիա-Հայաստան հարաբերությունների նորմալացման ուղղությամբ կոնկրետ քայլեր կատարելու առումով եւ ասվել. «Հայկական եւ ադրբեջանական կողմերի բանակցությունները մադրիդյան սկզբունքների շրջանակներում պետք է ամենակարճ ժամանակահատվածում հասցնել ավարտին»:

Թուրքիայի արտգործնախարարությունը կարեւոր է համարել Մինսկի խմբի համանախագահող երկրների հայտարարության մեջ ղարաբաղյան հակամարտության կարգավորման պայմանավորումը մադրիդյան սկզբունքներով, որոնց տվել է հետեւյալ գնահատականը. «Այս սկզբունքները երկու երկրների միջեւ ծավալվող բանակցություններում կողմերի մոտեցումներն արտացոլող ամբողջականություն են»:

Նույն օրը՝ հուլիսի 11-ին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնարար սկզբունքների մասին հաղորդագրություն է տարածել Սպիտակ տունը: Դա, ինչպես թուրքական հանրային հեռուստատեսությունն է նշել, ղարաբաղյան հակամարտության կարգավորման հիմքում նույնպես դնում է մադրիդյան հիմնարար սկզբունքները, հելսինկյան եզրափակիչ ակտի հիման վրա ելնում են տարածքային ամբողջականության պահպանման, ժողովուրդների գոյակցության եւ ինքնորոշման իրավունքներից:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Պուտինն ու Ահմադինեժադը՝ նույն «հարկի» տակ

Սոցիոլոգիական հարցումներն ինքնին օգտակար են հասարակական տրամադրություններ բացահայտելու տեսանկյունից: Սակայն հայտնի է, որ օբյեկտիվ ուսումնասիրությունների հետ մեկտեղ լինում են նաեւ, այսպես կոչված, պատվիրված «հարցումներ»՝ նախապես կանխորոշված արդյունքներով: Նման պարագաներում որպես կանոն պատվիրատուի դերում հանդես են գալիս իշխող խավերը, պետությունների բարձրագույն ղեկավարներ եւ այլք, որոնք հասարակական ներգործության այդ միջոցն օգտագործում են սեփական վարկը արհեստականորեն բարձրացնելու կամ հակառակորդ ուժինը գցելու համար:

Նույն երեւույթն է նկատվում նաեւ միջազգային մասշտաբով: World Public Opinion-ը աշխարհի 20 խոշորագույն երկրներում հարցում է անցկացրել «Վստահո՞ւմ եք դուք այս լիդերներին» թեմայով: Ահա միջնցառման արդյունքները.

| | Այո տոկոս | Ոչ տոկոս |
|---|---|---|
| **Բարաք Օբամա** | 61 | 31 |
| **Բան Կի Մուն** | 40 | 35 |
| **Անգելա Մերկել** | 40 | 38 |
| **Գորդոն Բրաուն** | 38 | 41 |
| **Նիկոլա Սարկոզի** | 36 | 45 |
| **Հու Ցզինտաո** | 32 | 44 |
| **Վլադիմիր Պուտին** | 34 | 50 |
| **Մահմուդ Ահմադինեժադ** | 28 | 49 |

Ինչպես տեսնում եք, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարից բացի բոլոր մյուսները պետության ղեկավարներ են, որոնց մեջ, սակայն, Ռուսաստանը ներկայացված է Վլադիմիր Պուտինով: Ըստ երեւույթին սա էլ պետք է ընդունել որպես հասարակական կարծիք. Պուտինը ինչպես իր երկրում, այնպես էլ աշխարհում շարունակում է ընկալվել որպես Ռուսաստանի ամենաազդեցիկ քաղաքական դեմքը՝ լիդերը:

Վստահության ցուցակը գլխավորում է ԱՄՆ-ի նախագահ Օբաման: Նորընտիր ղեկավարը նորովի է նայում համաշխարհային անցուդարձին, եւ դա շահեկան է դիտվում հատկապես իր անփառունակ նախորդի՝ կտսեր Բուշի համեմատ: Վերջինս ուժի վրա հենվող իր բիրտ քաղաքականությամբ դարձել էր մոլորակի ամենաամերժելի լիդերներից մեկը:

Հազիվ թե հայերիս առանձնապես հետաքրքրի, թե ինչ չափով են վստահելի կամ անվստահելի եվրոպացի առաջնորդները: Ուստի եկեք մեր ուշադրությունը կենտրոնացնենք վերջին երկուսի՝ մեր ռազմավարական դաշնակցի եւ մեր մերձավոր հարեւանի վրա: Ստացվում է այնպես, որ Վլադիմիր Պուտինը աշխարհի, կոպիտ ասած, ամենաչսիրված լիդերն է, այն աստիճան, որ իր այդ բացասական վարկանիշով գերազանցում է նույնիսկ Մահմուդ Ահմադինեժադին: Սրան փոքր-ինչ դժվար է հավատալ: Ինչքանո՞վ է օբյեկտիվ, օրինակ, որ գերմանասեր Պուտինը, որը իսկական ավանդ ունի ռուս-գերմանական բազմակողմ հարաբերությունների մերձեցման գործում, բուն Գերմանիայում վստահության առումով ձեռք է բերել... 72 տոկոս բացասական ցուցանիշ: Առնվազն տարօրինակ է: Արեւմուտքում, անշուշտ, սիրո առարկա չեն ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ առավել եւս Իրանը, ընդ որում, բավականին տարբեր պատճառներով: Մեծ արդյունավետությամբ անդամահատելով Խորհրդային Միությունը, եւ Ռուսաստանը դարձնելով խրտվիլակ, Արեւմուտքն այնքան պարարտացավ այդ երկրի անբավ բնական հարստությունները վայելելու գիշատիչ մտքից, որ ինքն էլ չնկատեց, թե Վլ. Պուտինը ինչպես կամաց-կամաց ոտքի կանգնեցրեց վիրավոր արջին ու նորեն հաստատեց գերտերության իր հավակնությունները: Եվ այդ ողջ ժամանակահատվածում արեւմտյան ԶԼՄ-ները անզոր կատաղությամբ Ռուսաստանը ներկայացնում էին (եւ շարունակում են ներկայացնել) որպես կիսավայրենի, ագրեսիվ մի երկիր՝ անընդունակ «դեմոկրատիայի»: Եվ, իհարկե, այդ ամենում «մեղավոր» է ինքը՝ Պուտինը:

Ահմադինեժադին այդ նույն Արեւմուտքում տանել չեն կարողանում, քանզի պարսկական քաղաքակրթությունը զարթոնք է ապրում եւ ձգտելով միջուկային տերության կարգավիճակի, մարտահրավեր է նետում առաջին հերթին ԱՄՆ-ին ու Իսրայելին: Եվ համաշխարհային լրատվամիջոցներում առաջատար դիրքեր ունեցող հրեական գործոնը չէր կարող չկերտել շատ ավելի վայրենի ու անհամեմատ ավելի ագրեսիվ լիդերի կերպարը: Ստացվում է, որ երկուսն էլ վտարյալ են «քաղաքակիրթ» աշխարհի համար եւ արժանի մերժման, այդ թվում նաեւ՝ ըստ հարցման արդյունքների: Մի քիչ ավել, մի քիչ պակաս՝ էական չէ:

Հետաքրքրական է, որ այս «իրողությունը» Ռուսաստանում խիստ բարեհաճությամբ, եթե չասենք՝ չարախնդությամբ ընդունեցին Պուտինին չհամակրող լրատվամիջոցները:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ՎԱՇԻՆԳՏՈՆ

# Աֆղանստանում 2001-ին գերի թալիբները զանգվածաբար սպանվել են

## *ԱՄՆ-ում քննություն է սկսվել*

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման կարգադրել է ստուգել այն տեղեկությունները, որ Ջորջ Բուշի վարչակազմը «աչք է փակել» Աֆղանստանում 2001 թվականին առնվազն 1000 գերի թալիբների սպանության փաստի վրա: Այդ մասին Օբաման հայտնել է CNN հեռուստաընկերությանը տված հարցազրույցում:**

**Խոսքը «Թալիբան» շարժման այն գրոհայինների մասին է, որոնք 2001-ի վերջերին գերի էին հանձնվել Աֆղանստանի փրկության միացյալ իսլամական ճակատին: Վերջինս վայելում էր ԱՄՆ-ի աջակցությունը: Թալիբներին կալանքի տակ էին առել գեներալ Աբդուլ Ռաշիդ Դուստումի զորքերը:**

**1980-ական թվականներին Դուստումը դաշտային հրամանատար էր եւ մարտնչում էր ԱՄՆ-ի աջակցությունը վայելող ուժերի դեմ, բայց հետագայում անցել էր նրանց կողմը:**

**2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո նա սկսել էր ամերիկացիներից օժանդակություն ստանալ թալիբների դեմ մղվող պայքարում:**

**Թալիբների զանգվածային սպանությունների մասին առաջին անգամ գրել էր «Նյուզուիք» շաբաթահանդեսը 2002 թվականին: Նշվել էր, որ թալիբները մահացել են լեփ-լեցուն բեռնատարներում, որոնցով նրանց բանտ էին տեղափոխում: Այդ իրավապաշտպան կազմակերպություններից մեկը գտել էր գերիների զանգվածային թաղման վայրեր: Աֆղանստանում ռազմական գործողությունների ղեկավար, գեներալ Թոմմի Ֆրենկսը խոստացել էր օգնել քննությանը: Բայց ահա 2009 թվականի հուլիսի 10-ին լրատվամիջոցները հաղորդեցին, որ Ջորջ Բուշի վարչակազմը քանիցս խոչընդոտել է գերիների սպանության հանգամանքները քննելու փորձերին:**

**Դուստումը երկար ժամանակ ապրում էր Թուրքիայում: Աֆղանստանում նրան մեղադրում էին հակառակորդի կողմն անցած քաղաքական նախկին դաշնակցի առեւանգման մեջ: Սակայն 2009-ի հունիսի նախագահ Համիդ Կարզայը նրան կրկին նշանակեց Աֆղանստանի պաշտպանության նախարար:**

**ԱՄՆ-ում ներկայումս հասունանում է մեկ ուրիշ սկանդալ՝ կապված «Ալ Ղաիդայի» անդամներին ոչնչացնելու ԿՀՎ գերգաղտնի ծրագրի բացահայտման հետ: «Նյու Յորք թայմս» թերթը գրում է, որ 2001-ին ընդունած այդ ծրագրի մասին ԿՀՎ-ն չի հայտնել նույնիսկ Կոնգրեսին: Եվ դա արվել է ԱՄՆ նախկին փոխնախագահ Դիկ Չեյնիի հրամանով:**

**«Ուոլ սթրիթ ջորնըլ» թերթը հաղորդում է, որ 2001-ին դեռ Աֆղանստան ներխուժելուց առաջ ԿՀՎ-ն փորձել է օրինականացնել նաեւ «Թալիբանի» որոշ գրոհայինների սպանությունը:**

# Ասոն պարտվեց եւ ցրելու է խորհրդարանը



**Ճապոնիայի վարչապետ Տարո Ասոն որոշել է ցրել խորհրդարանը եւ անցկացնել ընդհանուր ընտրություններ: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը, վկայակոչելով ճապոնական NHK գործակալության տվյալները:**

**Ներկայացուցիչների պալատը պաշտոնապես ցրվելու է եկող շաբաթ (ամենայն հավանականությամբ՝ հուլիսի 21-ին): Իսկ նոր ընտրությունները տեղի կունենան օգոստոսի 30-ին, հաղորդում է NHK-ն:**

**Խորհրդարանի արձակման պատճառը Տոկիոյում հուլիսի 12-ին անցկացված տեղական ընտրությունների արդյունքներն են: Տարո Ասոյի գլխավորած Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը ընտրություններում ջախջախիչ պարտություն կրեց՝ մայրաքաղաքի խորհրդարանում ստանալով ընդամենը 38 տեղ: Կառավարող կոալիցիայի մեջ մտնող Կոմեյտո կուսակցությունը ստացավ 23 տեղ:**

**Տոկիոյի օրենսդիր մարմնում կա 127 պատգամավոր: Վերջին 44 տարում առաջին անգամ կոալիցիան կորցնում է տեղերի մեծամասնությունը: Նույն ընտրություններում ընդդիմադիր Դեմոկրատական կուսակցությունը ստացավ 54 տեղ:**

**Վարչապետ Ասոյի գործունեությանը հավանություն է տալիս Ճապոնիայի բնակչության մոտ 20 տոկոսը: BBC-ի տեղեկությունների համաձայն, նա կարող է վաղաժամկետ ընտրություններից առաջ թողնել Լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդի պաշտոնը:**

**Ավելի վաղ ենթադրվում էր, թե ընտրությունները կանցկացվեն հոկտեմբերին, քանի որ խորհրդարանի ստորին պալատի աշխատանքի չորսամյա ժամկետը լրանում է սեպտեմբերի 10-ին:**

**Ճապոնիան, բազմաթիվ երկրների նման, տուժում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից: 2008-ի չորրորդ եռամսյակում երկրի ՆՀԱ-ն կրճատվել է 3,3 տոկոսով:**

# Իրաքում պայթյուններ ԱՄՆ դեսպանի ավտոմեքենայի եւ եկեղեցու մոտ

**Իրաքի հարավում կիրակի օրը ռումբ է պայթել ԱՄՆ դեսպանի շքախմբի մոտ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Դի-Քարի նահանգում դեսպանի ավտոմեքենայի անցման ժամանակ տեղի ունեցած պայթյունից ոչ ոք չի տուժել: Պետդեպարտամենտում ԶԼՄ-ներին հայտնել են, որ սկսված է միջադեպի հանգամանքների քննությունը: Չի նշվում, թե ԱՄՆ դեսպան Քրիստոֆեր Հիլը ինչ նպատակով էր շրջում Իրաքի այդ մասում:**

**Մինչդեռ Բաղդադի արեւելքում կիրակի երեկոյան քրիստոնեական մի եկեղեցու մոտ ականված ավտոմեքենայի պայթյունից զոհվել են 4 եւ վիրավորվել 21 անձինք:**

**Իրաքի զինվորական ղեկավարությունում կարծում են, որ գրոհայինների հարձակումները հնարավոր են եւս մի քանի տարի: 2009-ի հունիսի վերջերին ամերիկացի զինծառայողները հեռացան Իրաքի քաղաքներից եւ դրանց վերահսկողությունը հանձնեցին իրաքյան բանակին: Դրանից քիչ անց Իրաքի ղեկավարությունը ԱՄՆ-ին խնդրեց չմիջամտել երկրի միջդավանանքային հակամարտություններին եւ իրադրության կարգավորման խնդիրը թողնել իրաքցիներին:**

AZG NEW 6.QXD 7/13/2009 9:57 PM Page 1



# Վեցերորդ «Ոսկե ծիրանի» բացմանը գլխավոր հովանավորը յոթերորդի մասին էր մտածում

Կարմիր գորգով անցնող բարեստեսությանն ընդգծած կինոմատոգրաֆիստները շուք հաղորդեցին վեցերորդ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի բացման արարողությանը, որն արդեն ավանդաբար այս տարի էլ սկսվել էր ծիրանօրհնեքով Սուրբ Զորավոր եկեղեցում:

Իսկ երեկոյան լեցուն էին «Մոսկվա» կինոթատրոնի դահլիճները՝ շուրջ 1000 մարդ մասնակից էր փառատոնի բացման արարողությանը, որի ընթացքում շատ էին ծափահարությունները կինեմատոգրաֆում հայտնի անձանց դասվին:

Տարբեր անձանց երախտագիտության խոսքերից հետո փառատոնի գլխավոր հովանավոր ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին շնորհվեց մշակույթի նախարարության եւ «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի սահմանած «Մանթաշյան ասպետ» ոսկե շքանշանը:

«Երբ «Ոսկե ծիրանը» դեռ գաղափար էր, կազմակերպիչները հավատում էին հաջողելուն: Նրանք հավատացին ու մենք իրավունք չունենք չհավատալու եւ հենց այդ պատճառով էլ այսօր՝ վեցերորդ փառատոնի բացման օրն, արդեն մտածում ենք հաջորդի աշխատանքներում լինելու մասին», - տեղեկացրեց Ռալֆ Յիրիկյանը:

Եվ խոսքով ընդմիջվող երաժշտական համարներից եւ Վաչե Շարաֆյանի հեղինակած «Ոսկե ծիրան»




ստեղծագործության կատարումից հետո որպես փառատոնի բացում կայացավ ֆրանսիացի ռեժիսոր Լորան Տյուելի «Մերձակա շրջապատ» ֆիլմի պրեմիերան:

Փառատոնի կազմակերպիչները ֆիլմը կարեւորել էին մի քանի տեսանկյունից՝ նախ այն պատմում է հայազգիների հանցագործ կլանի մասին, ապա գլխավոր դերում հանրահայտ Ժան Ռենոն է, իսկ պրոդյուսերն է Ալեն Թերզյանը՝ ֆրանսիական կինոակադեմիայի Սեզար մրցանակաբաշխության նախագահը:

Վերջինիս շնորհվեց Հայաստանի մշակույթի նախարարության ոսկե մեդալ, որը Թերզյանն ընդունեց հուզմունքով եւ փաստեց. «Մեծ մայրս, որ բոլորիս հետ եւ մշտապես հայերեն էր խոսում, պատվիրում էր շուտ արթնանալ ու շատ աշխատել: Ողջ կյանքումս այդպես էլ վարվել եմ ու թեեւ շրջել եմ աշխարհով, սակայն մեծ մորս մեկ այլ պատգամը՝ լինել Հայաստանում, միայն այսօր կարողացա կատարել»:




## Անջեյ Կրակովսկու հաջորդ ֆիլմը Հայաստանում կնկարահանվի

Հրեական ծագմամբ լեհ ռեժիսոր Անջեյ Կրակովսկին, արդեն 41 տարի բնակվում ու գործում է Միացյալ նահանգներում, իր հաջորդ ֆիլմը մտադիր է Հայաստանում նկարահանել: Այդ ընտրությունը ռեժիսորը այսկերպ բացատրեց. «Չէի ցանկանա, որ այդ ֆիլմը կրեր լեհական կինոյի սպեցիֆիկան, նպատակս բոլորին հասկանալի ֆիլմ նկարահանելն է ու դա կանեմ Հայաստանում»:

Ռեժիսորի հավաստմամբ ֆիլմը պատմելու է ծերության դուռ հասած երկու եղբայրների՝ Կրակովսկու հոր եւ հորեղբոր մասին: Նրանցից մեկը կոշկակար է, մյուսը՝ քաղաքական գործիչ, պաշտոնյա է: Առաջինը կարողացել է ծերության անաշխատունակ օրերի համար գումար տնտեսել, իսկ մյուսը դատարկաձեռն է:

Առաջին անգամ Հայաստանում գտնվող ռեժիսորի «Պալադինին սպասելիս» ֆիլմն է ներկայացված «Ոսկե ծիրանում»: Այն նկարահանվել է Գվատեմալայում եւ ճանաչվել լավագույնը լատինաամերիկյան կինոյի փառատոնում: Կրակովսկու ներկայացմամբ ֆիլմը զերծ է արյունով ու սեւախեղդ տեսարաններից, ազգությունների ու մշակույթների կամուրջ է:

## Երկու ֆիլմի պրեմիերա՝ որպես փոխլրացում

Ռեժիսոր Սերգեյ Սոլովյովի ուսանողական տարիներին ունեցած՝ Լեւ Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպի հիման վրա ֆիլմ նկարահանելու մասին երազանքի իրականացման համար ոչ միայն տասնամյակներով հաշվվող ժամանակ, այլեւ նկարահանման 24 փորձ պետք եղավ, բայց ի վերջո հաջողվեց: Եվ նոյեմբերին կցուցադրվի 5 մասանոց հեռուստատարբերակը, մինչ այդ կկայանա երեւանյան պրեմիերան՝ զուգահեռ «2-Ասսա-2» ֆիլմի պրեմիերային:

«1987 թվականին մեծ համարում ունեցող «Ասսա»-ի շարունակությունը նկարահանելու համար շատերն էին խոսում, բայց ոգեշնչումը եկավ «Աննա Կարենինայից» հետո եւ մի օրում գրեցի «2-Ասսա-2»-ի սցենարը ի շարունակություն «Ասսա»-ի եւ ի տեղեկացում «Աննա Կարենինայի» նկարահանման ընթացքի մասին: Առաջին անգամ կինեմատոգրաֆի պատմության մեջ մի ամբողջական ֆիլմ պատմում է մյուսի ստեղծման ընթացքը»,- երեկ պարզաբանեց Սերգեյ Սոլովյովը:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՆԱՀԱՏԱՆՔ

# «Մորս ու տատիս երազանքն իրականացրեցի»

**«Ազգը»** անդրադարձել է ֆրանսահայ հայտնի պրոդյուսեր **Ալեն Թերզյանին**, որը Ֆրանսիայի կինոարտադրության ամենաազդու դեմքերից է, «Ալտեր ֆիլմզ» պրոդյուսերական ընկերության գլխավոր տնօրեն, Ֆրանսիայի պրոդյուսերների միության եւ ֆրանսիական կինոակադեմիայի նախագահ: Ալեն Թերզյանի նախնիները գաղթել են Արեւմտյան Հայաստանից, 1923-ին հաստատվել են Ֆրանսիայում: Իգդիրցու թոռը՝ Ալենը, հետեւելով ծնողների խորհրդին, ուսուցչություն է արել 22 տարեկանում Շեւինյիում՝ այն դպրոցում, ուր դասավանդում էր եւ մայրը: Մի քանի տարի անց նա տնտեսագիտություն է դասավանդում Սորբոնի համալսարանում ու պաշտպանում է թեկնածուական թեզը: Իսկ երբ մի առիթով ծանոթանում է պրոդյուսեր Ալեքսանդր Մնուշկինի հետ («Հոյակապը», «Ֆանֆան կակաչ» եւ այլն) հաստատ որոշում է դառնալ պրոդյուսեր ու խոստովանում. «Ես համոզված չէի, որ լավ ռեժիսոր կդառնամ, իմ խառնվածքին ու մտածելակերպին ավելի մոտ էր պրոդյուսերի մասնագիտությունը»: «Ազգի» հետ զրույցի ժամանակ պրն Թերզյանը ասաց. «Հայկականությունը իմ մեջ էլ բավականին ամուր է մնացել տատիկիս շնորհիվ, ով մշտապես պահանջում էր խոսել հայերեն: Նա միշտ բոլորիցս պահանջում էր «մաքուր պահել» ընտանիքը, մարդավարի ապրել, այն է, հայերեն խոսել ու հայավարի ապրել: Մենք այդպես էլ անում էինք»: Թերզյանը իր տիկնոջ ու երկու տղաների հետ առաջին անգամ է ժամանել Հայաստան եւ այդ կարեւոր երազանքը իրականացավ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շնորհիվ: «Վեց տարի առաջ Ֆրանսիայի նախագահի հետ Հայաստան գալու մտադրություն կար, սակայն ինչ-ինչ պատճառներով չստացվեց: Մայրս միշտ ասում էր, Հայաստանը պետք է անպայման տեսնել, հաճախ գալ այստեղ: Այսօր ես իրականացրի տատիս, մորս, նաեւ իմ վաղեմի երազանքը, եւ ուրախ եմ, որ կինոփառատոնի միջոցով հնարավորություն ունեցա ընտանյոք գալ Երեւան ու զավակներիս էլ ծանոթացնել իրենց արմատների հետ»:

**- Պարոն Թերզյան, երեկ ձեզ շնորհվեց ՀՀ մշակույթի նախարարության ոսկե հուշամեդալը, ի՞նչ զգացիք այդ պահին:**

- Ես անչափ ուրախ եմ ու հպարտ, որ հայ եմ, որ գտնվում եմ իմ նախնիների հայրենիքում: Մի պահ չհասկացա, թե ի՞նչ է կատարվում եւ թե ինչի՞ համար են ինձ մեդալ շնորհում, բայց ուրախ եմ ու շատ հպարտ, որ հայրենիքում եմ արժանանում նման գնահատանքի, որ շատ պարտավորեցնող է:

**- Արդյոք պատրաստվո՞ւմ եք հայ կինոարտադրողների հետ համագործակցել եւ նրանց աշխատանքները ներկայացնել աշխարհի կինոշուկաներին:**

- Այդ մասին, կարծում եմ, այս այցիս ընթացքում կլինեն հանդիպումներ եւ եթե կարողանանք ընդհանուր ինչ-որ ծրագիր իրականացնել, անշուշտ, ես իմ կարողությունները



կներդնեմ՝ հանուն հայկական կինոյի ապագայի ու նրա ճանաչման:

**- Ձեր ընտանիքում հայկական ուտեստներ հաճա՞խ են պատրաստում, եթե այո, որո՞նք են դրանք:**

- Անշուշտ: 92-ամյա մայրս հրաշալի խոհարար է նաեւ, ու ես շատ եմ սիրում «շիշ քեբաբը, իմամբայլդին, թուռշին (թթու), յալանչի տոլման խաղողի թփով (առանց մսի - Մ. Մ.), որի վրա շատ լիմոն պիտի դնես: Շատ եմ սիրում դդումով տոլման, բրնձով փլավը: Ամենեն սիրածս պտուղը ծիրանն է, ու այստեղ գտնվելուս օրերին ամբողջ օրը ծիրան եմ ուտում, որովհետեւ աշխարհի ոչ մի երկրում ծիրանը այդպիսի համ չունի, ինչպես այստեղ: Շատ ուրախ եմ, ու շատ հպարտ, որ արժանացա նման պատվի ու, կարծում եմ, այս այցը ամբողջ կյանքիս երազանքի իրականությունը դարձավ: Հուսամ, որ զավակներս ամեն տարի կուզեն Հայաստան այցելել: Երբ ոտքս օդանավից դրեցի հայկական հողին, տարօրինակ զգացում ապրեցի: Դա կարող է հասկանալ միայն այն հայը, որն ամբողջ կյանքում երազել էր լինել Հայաստանում ու դա իրեն հաջողվեց:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# «Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր»-ը՝ Շուշիում

Շաբաթ օրը, հուլիսի 11-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշի քաղաքում կայացել է Թաթուլ Հակոբյանի՝ «Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր» գրքի ցուցահանդես-վաճառքը: Գրքի հեղինակը ներկաներին ասել է, որ Շուշիում նման միջոցառում անցկացնելը արդարացված է գոնե երեք պատճառով՝ հայոց բերդաքաղաքը եղել է հայ գրքի, մամուլի եւ տպագրության կարեւորագույն օջախներից, երկրորդ՝ Շուշին եղել է արցախյան ազատամարտի փառավոր էջերից, եւ երրորդ՝ 600 էջանոց այս գրքում բավականին մանրամասն ներկայացվել են Շուշիի հերոսական, երբեմն՝ ողբերգական անցյալն ու այսօրվա վիճակը:

Շուշիի շրջանային վարչակազմի աշխատակազմի ղեկավար, հերոսական Քարինտակ գյուղի երկար տարիների գյուղապետ եւ արցախյան ազատամարտի մասնակից Գրիշա Հովհաննիսյանը ներկաներին ասել է, որ գրքի հեղինակին ճանաչում է նախ եւ առաջ որպես լրագրողի, որ բազմաթիվ անգամ այցելել է Լեռնային Ղարաբաղ, հանդիպել շարքային արցախցիների հետ, Լեռնային Ղարաբաղի եւ նրա բնակիչների մասին հրապարակումներ պատրաստել հայկական մամուլի համար:

Գրքի հեղինակը ասել է, որ ինքը ղարաբաղյան պատերազմը, բանակցային գործընթացը եւ ավելի քան 15 տարի շարունակվող «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը գրքում ներկայացնում է մարդկային ողբերգությունների, խեղված ճակատագրերի ու տառապանքների ենթատեքստում ոչ այն պատճառով, որ չարժեր ու անիմաստ էր այդքան թանկ գին վճարել արցախյան ազատամարտի դիմաց, այլ ընթերցողին կրկին հիշեցնելու, որ այդ հաղթանակների հետ պետք է վարվել խնամքով, չփոշիացնել ավելի քան վեց հազար հայերի արյան գնով ձեռք բերված նվաճումը:

Շուշիում «Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր» գրքի ցուցահանդես-վաճառքի ընթացքում գնվել է 19 օրինակ:

Գիրքը 1000 օրինակով հրատարակվել է 2008 թ. սեպտեմբերին: Անցնող 10 ամիսների ընթացքում սա գրքի 11-րդ շնորհանդես-վաճառքն էր: Մինչ այդ նման միջոցառումներ են կազմակերպվել Ստեփանակերտում, Երեւանում, Բեյրութում, Այնճարում (Լիբանան), Հալեպում (Սիրիա), Հադրութում, Գյումրիում (երկու անգամ), Մարտակերտում եւ Մարտունիում: Առաջիկայում տեղի կունենա «Կանաչ ու սեւ. արցախյան օրագիր» գրքի երկրորդ հրատարակությունը:

# Հանդիսավոր միջոցառումներ ճարտարապետ Սինանի հիշատակին

**Կանադահայ ԹՄՄ «Ապագայ» շաբաթաթերթի հունիսի 22-ի համարը տեղեկացնում է, որ ըստ «PanArmenian.net»-ի հաղորդագրության, Թուրքիայում սկսվել է նշանավոր հայազգի ճարտարապետ Սինանի հիշատակին նվիրված միջոցառումների տարին: Հանդիսավոր արարողություններ արդեն իսկ կատարվել են նախագահական պալատում՝ Սինանի մասին վավերագրական ֆիլմի ցուցադրությամբ:**



**Նախատեսվում է նաեւ միջոցառումներ կայացնել Լոնդոնում, Երուսաղեմում, Փարիզում եւ Կահիրեում:**

**Օսմանյան շրջանի հանճարեղ ճարտարապետ Սինանը ծնվել է 1489-ին Կեսարիայում, հայկական ընտանիքում: Ենիչերիների շարքերը համալրելու նպատակով կազմակերպված մանկահավաքի տարիներին, նրան եւս փոքր տարիքում իսլամացրել են: Հետագայում սուլթան Սելիմի կարգադրությամբ նրան ուղարկել են ճարտարապետություն սովորելու: Նա ծառայել է հինգ սուլթանների եւ ստեղծել իսլամական ճարտարապետության բացառիկ նմուշներ, որոնց շարքին են դասվում Սուլեյմանիյե մզկիթը, Դոլմաբահչեի պալատները եւ Թոփքափուն: Ընդհանուր առմամբ կառուցել է 365 շենք՝ մզկիթներ, մեդրեսեներ, դամբարաններ, բաղնիքներ: Նրա ճարտարապետների տոհմի ժառանգորդներից մեկը՝ Զաքարիա Միլդանօղլուն մասնակցել է Աղթամար կղզու Սբ Խաչ վանքի վերականգնման աշխատանքներին:**

Հ. Ծ.

# Սեպտեմբերին՝ կատարողական արվեստի փառատոն Մոնրեալում

Հովանավորությամբ Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության եւ մասնակցությամբ Հայաստանից հրավիրված թատերական արվեստի դափնեկիրներ Գայյա Նովենցի եւ Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Երվանդ Ղազանչյանի Մոնրեալի Թեքեյան մշակութային միությունը կազմակերպել է կատարողական արվեստի մի փառատոն, որը տեղի կունենա սեպտեմբերի 5-13-ը, եւ որի ընթացքում բացի թատերական ներկայացումներից կցուցադրվեն հայկական ֆիլմեր եւ կբացվի հայ թատրոնի պատմությանը նվիրված ցուցահանդես:

Ըստ «Ապագայ» շաբաթաթերթի տեղեկատվության ԹՄՄ-ն կոչ է հղել մոնրեալահայ բոլոր դերասաններին՝ օգտվել ընձեռված բացառիկ պատեհությունից եւ համագործակցել ճանաչված ու սիրված արվեստագետի հետ՝ «Գնա մեռիր, եկուր սիրեմ» կատակերգության բեմադրման աշխատանքներում:

Հ. Ծ.

AZG NEW 7.QXD 7/13/2009 10:52 PM Page 1



# «Կատաղած ցուլը» զիջեց «Քինգ Կոնգին»

## Պրոֆեսիոնալ ռինգում Վախթանգ Դարչինյանն իր երկրորդ պարտությունը կրեց

Առաջին թեթեւագույն քաշային կարգի աշխարհի բացարձակ չեմպիոն Վախթանգ Դարչինյանին չհաջողվեց նվաճել WBA-ի վարկածով թեթեւագույն քաշային կարգի չեմպիոնական գոտին: Հայ բռնցքամարտիկը միավորներով (111-116, 113-114, 113-114) պարտվեց գանացի Ջոզեֆ Ագբեկոյին: Այս անգամ Դարչինյանին չհաջողվեց իրեն հատուկ բռնցքամարտը ցուցադրել եւ դիպուկ հարվածներ տեղալ մրցակցի վրա: Փոխարենը նա մենամարտի ժամանակ վնասեց երկու հոնքերն էլ եւ արյունահոսությունը եւս խանգարեց Վախթանգին մրցակցի նկատմամբ առավելության հասնելու:

Հետաքրքրական է, որ մենամարտի նախօրեին, երբ տեղի ունեցավ բռնցքամարտիկների կշռվելու պաշտոնական արարողությունը, Դարչինյանի քաշը (53,3 կգ) 200 գրամով պակաս էր թեթեւագույն քաշային կարգի համար սահմանվածից: Ագբեկոն կշռում էր 52,8 կգ: Մեկ գիշերվա ընթացքում Դարչինյանը քաշն ավելացրել էր 4,6 կգ-ով եւ մենամարտի օրն արդեն կշռում էր 57,92 կգ: Իսկ Ագբեկոյի քաշը 54,93 կգ էր:

Ամերիկյան Սանրայզ քաղաքում կայացած մենամարտից հետո բռնցքամարտիկներն իրենց կարծիքն են արտահայտել: «Այսօր ռինգում ես այլ մարտավարություն էի ընտրել: Հիմնական շեշտը դրել էի նոկաուտի ենթարկող ուժգին հարվածների վրա: Միեւնույն սխալները թույլ տվեցի եւ պարտվեցի: Իհարկե, սա արդարացում չէ: Այսօր այնքան էլ խելացի չէի գործում: Մրցակիցս գերազանցեց ինձ: Կդիտեմ մենամարտի տեսագրությունը եւ կուղղեմ սխալներս», նշել է Վախթանգ Դարչինյանը:

«Դարչինյանն ինձ հրեց 7-րդ ռաունդում (ի դեպ, մրցավարը նոկդաուն հաշվեց) եւ ողջ մենամարտի ժամանակ նույն կերպ էր վարվում: Նա ռինգում իրեն շատ կոպիտ էր պահում: Այսօր ինձ հարկ եղավ մենամարտել միանգամից երկու մրցակիցների՝ Դարչինյանի եւ մրցավարի դեմ: Սակայն դա ինձ համար ոչ մի նշանակություն չուներ, թեկուզ 5 հոգի լինեին: Միեւնույն է, հաղթելու էի եւ պահպանելու էի տիտղոսս: Դարչինյանը մինչեւ մենամարտը շատ էր խոսում եւ ինչպես խոստացել էի, ապացուցեցի, որ նա շատախոս է: Ես նախկինի պես աշխարհի չեմպիոնն եմ, այլ ոչ թե շիմպանզե, ինչպես նա էր խոստացել ինձ դարձնել մենամարտից հետո: Ցանկանում եմ դառնալ աշխարհի ուժեղագույն բռնցքամարտիկներից մեկն անկախ քաշային կարգից», նշել է Ջոզեֆ Ագբեկոն:



Նշենք, որ մոտ ժամանակներս Վախթանգ Դարչինյանը պետք է վերջնական որոշում կայացնի՝ պաշտպանելո՞ւ է առաջին թեթեւագույն քաշային կարգում IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը պարտադիր հավակնորդ Սիմֆիվե Նոնգվայիի հետ մենամարտում, թե հրաժարվելու է չեմպիոնական գոտուց եւ տեղափոխվելու է թեթեւագույն քաշային կարգ: Հիշեցնենք, որ Վախթանգը պրոֆեսիոնալ ռինգում իր 2-րդ պարտությունը կերց: Առաջինում նա պարտվել էր Նոնիտո Դոնեյրին՝ զրկվելով գերթեթեւագույն քաշային կարգի IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսից:

# Ապարեզ է դուրս գալիս «Փյունիկը»

**Այսօր ֆուտբոլի չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլի առաջին խաղում ՀՀ բազմակի չեմպիոն «Փյունիկը» կհյուրընկալի Զագրեբի «Դինամոյին»: «Հանրապետական» մարզադաշտում հանդիպումը կսկսվի ժամը 20-ին: Մուտքը տոմսերով է: Խաղը կսպասարկի իտալական մրցավարական բրիգադը:**

**1945-ին հիմնադրված Զագրեբի «Դինամոն» նախկին Հարավսլավիայի առաջատար ակումբներից մեկն էր, որը 4 անգամ նվաճել էր երկրի չեմպիոնի, 7 անգամ գավաթակրի տիտղոսները: Հարավսլավիայի փլուզումից հետո «Դինամոն» 11 անգամ նվաճել է Խորվաթիայի չեմպիոնի, 10 անգամ՝ գավաթակրի կոչումները: Ընդ որում, վերջին չորս տարիներին դինամոյականներն ուժեղագույնն են երկրում, 3 անգամ էլ դարձել են գավաթակիր:**



ՖՈՏՈԼՈՒՐ

**Այս ամենը վկայում է, որ «Փյունիկի» մրցակիցը բավական ուժեղ թիմ է: «Դինամոյի» ամենաճանաչված ֆուտբոլիստը Խորվաթիայի հավաքականի 35-ամյա կենտրոնական պաշտպան Ռոբերտ Կովաչն է: Թիմը եվրոգավաթների մասնակցության հսկայական փորձ ունի: Անցկացրած 153 հանդիպումներից 55-ում «Դինամոն» հաղթել է, 37-ն ավարտել է ոչ-ոքի, 61-ում պարտվել է: Գնդակների տարբերությունն է 224-198:**

**«Փյունիկը» 10-րդ անգամ է մեկնարկի դուրս գալիս եվրոգավաթներում: Հայաստանի թիմերից «Փյունիկը» բոլորից հաջող է հանդես եկել եվրոպական մրցասպարեզներում՝ 4 անգամ հաղթահարելով չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլի արգելքը: Եվրոգավաթներում փյունիկցիների նորամուտը կայացել է 1996-ի հուլիսի 17-ին: Այն ժամանակ գործող կարգի համաձայն ՈւԵՖԱ-ի վարկանիշային աղյուսակում ցածր գործակից ունեցող երկրների չեմպիոնները մասնակցում էին ՈւԵՖԱ-ի գավաթի մրցաշարին: Այդ մրցաշարի նախնական փուլում «Փյունիկը» հյուրընկալելով ֆիննական ՀԻԿ-ին, հաղթեց 3-1 հաշվով: Երկու գոլ խփեց Արսեն Ավետիսյանը, մեկ անգամ էլ աչքի ընկավ Համլետ Մխիթարյանը: Սակայն պատասխան խաղում ֆինները հաղթեցին նույնպիսի հաշվով, իսկ նշանակված լրացուցիչ ժամանակը շահեցին 2-1 հաշվով եւ մտան հաջորդ փուլ:**

**Առաջին հաջողությանը փյունիկցիները հասան 2002-ի չեմպիոնների լիգայի մրցաշարում: Օսկար Լոպեսի գլխավորությամբ «Փյունիկը» հաջողությամբ հաղթահարեց չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլի արգելքը՝ երկու խաղերում էլ հաղթելով ֆիննական «Տամպերեին» (4-0, 2-0): Սակայն հաջորդ փուլում թիմի հաղթարշավը կասեցրեց Կիեւի «Դինամոն», որը սեփական հարկի տակ 4 անպատասխան գնդակ խփեց, իսկ Երեւանում հասավ ոչ-ոքի (2-2) արդյունքի:**

**Հաջորդ երկու տարիներին «Փյունիկը» կրկնեց հաջողությունը Միխայ Ստոյկիցայի եւ Վարդան Մինասյանի օրոք: 2003-ին «Փյունիկն» առավելության հասավ Իսլանդիայի չեմպիոն «Ռեյկյավիկի» նկատմամբ (1-0, 1-1), իսկ հաջորդ տարի պայքարից դուրս մղեց մակեդոնական «Պոբեդային» (3-1, 1-1): Վերջին անգամ փյունիկցիներն առաջին փուլի արգելքը հաղթահարել են 2007-ին Արմեն Գյուլբուդաղյանցի գլխավորությամբ՝ առավելության հասնելով իռլանդական «Դերի Սիթիի» նկատմամբ (0-0, 2-0): Իսկ ահա անցած տարի «Փյունիկը» երկու խաղերում էլ պարտվեց Կիպրոսի «Անորթոսիսին» (0-1, 0-2), որը հանդես եկավ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում:**

**Այսօրվա խաղը եվրոգավաթներում փյունիկցիների 27-րդ հանդիպումն է: Մեր չեմպիոնը տոնել է 6 հաղթանակ, նույնքան խաղ ավարտել է ոչ-ոքի, 14-ում պարտվել է: «Փյունիկը» խփել է 28 գոլ, բաց է թողել 40-ը: Թիմի ռմբարկուն Արսեն Ավետիսյանն է, որը խփել է 4 գոլ: Թիմի կազմում բոլորից շատ խաղ է անցկացրել Աղվան Մկրտչյանը (20), իսկ ներկա կազմից առավելագույն քանակի խաղեր (18) անցկացրել է «Փյունիկի» ավագ Սարգիս Հովսեփյանը:**

**Բուքմեյքերները երեւանյան խաղում առավելությունը տալիս են Զագրեբի «Դինամոյին», որի հաղթանակը գնահատել են 1,65 գործակցով: «Փյունիկի» հաղթանակի գործակիցը 4,5 է, իսկ ոչ-ոքին գնահատվել է 3,5:**

ՇԱԽՄԱՏ

# Զավեն Անդրեասյանը հաղթողների թվում է

**Հայ շախմատիստների եռյակը բավական հաջող հանդես եկավ իտալական Բենասկե քաղաքում անցկացված շախմատի մրցաշարում: Գրոսմայստեր Զավեն Անդրեասյանը 11 հնարավորից վաստակելով 9 միավոր, ռումինացի Միհայ Մարինի, բուլղարացի Գեորգի Կիրիլովի եւ հնդիկ շախմատիստ Նարայանան Գիտայի հետ բաժանեց 1-4-րդ տեղերը: Լրացուցիչ գործակիցներով Զավենը գրավեց 3-րդ տեղը, իսկ հաղթող ճանաչվեց Մարինը: 9-րդ տուրում հաշտություն կնքելով Հրանտ Մելքումյանի հետ, Անդրեասյանը վերջին երկու մրցախաղերում հաղթեց չեխ Վիկտոր Լազնիչկային եւ սերբ Միսա Պապին:**

**Մեր մյուս շախմատիստները՝ Հրանտ Մելքումյանն ու Կարեն Մովսիսյանը առաջատարներից հետ մնացին ընդամենը կես միավորով: Մելքումյանը ոչ-ոքի խաղաց Վլադիմիր Բուրմակինի հետ եւ հաղթեց Նիջաթ Մամեդովին: Մովսիսյանը վերջնագծում պարզապես հիանալի խաղաց՝ տոնելով 3 անընդմեջ հաղթանակ: Նա պարտության մատնեց Նանկո Դոբրեւին, Լավրենտ Տրենտին եւ Անտոնիո Ֆրոյսին:**

# Մովսիսյանը հաղթանակի քաղցրությունը դեռ չի ճաշակել

**Սան Սեբաստիանի շախմատի մրցաշարում Սերգեյ Մովսիսյանին առայժմ չի հաջողվում հաղթանակ տոնել: Մեկնարկային 3 ոչ-ոքիներից հետո նա 4-րդ տուրում սպիտակներով զիջեց Ռուսլան Պոնոմարյովին, իսկ հաջորդ պարտիայում հաշտություն կնքեց Խուլիո Գրանդայի հետ: 5 տուրից հետո Մովսիսյանը Գրանդայի եւ Կասիմջանովի հետ բաժանում է 6-8-րդ տեղերը:**

**Աղյուսակը 4,5 միավորով գլխավորում է ճապոնացի Հիկարու Նակամուրան: Նա առավելության հասավ Ֆրանցիսկո Վալյեխոյի եւ Պաբլո Սեգունդոյի նկատմամբ: Առաջատարին մեկական միավոր են զիջում Պոնոմարյովն ու Սվիդլերը: 2,5-ական միավորով հաջորդ տեղերում են Մաքսիմ Վաշյե-Լագրավը եւ Ֆրանցիսկո Վալյեխոն: Սան Սեգունդոն ունի 1,5 միավոր, իսկ աղյուսակը եզրափակում է մեկ միավոր վաստակած Անատոլի Կարպովը: Վերջինս ոչ-ոքի խաղաց Գրանդայի հետ ու պարտվեց Պյոտր Սվիդլերին:**

# Արթուր Աբրահամը հրաժարվում է իր տիտղոսից

**IBF-ի վարկածով միջին քաշային կարգի աշխարհի ներկայիս չեմպիոն Արթուր Աբրահամը ժամանել է Նյու Յորք, որպեսզի իր չեմպիոնական գոտին անձամբ հանձնի այդ կազմակերպության նախագահ Մերիեն Մոհամեդին: «Ժամանակն է նոր բարձունքներ նվաճել: Քանի որ ոչ Ֆելիքս Շտուրմը, ոչ էլ Կելի Պավլիկը չցանկացան ինձ հետ մենամարտել, ուստի որոշել եմ տեղափոխվել քաշային հաջորդ կարգ: Այժմ ցանկանում եմ ուժեղագույնը դառնալ երկրորդ միջին քաշային կարգում: Այնպես որ, առաջիկայում ինձ ավելի հետաքրքրական մենամարտեր են սպասում», նշել է Աբրահամը:**

**Ավելի ծանր քաշային կարգ տեղափոխվելու մասին Արթուրը վաղուց էր հայտարարել: Պատճառը ավելորդ քաշը գցելու դժվարություններն են, ինչն ի վերջո ազդում է առողջության վրա:**

# Խորեն Գեւորն էլ պարտվեց

Հայազգի պրոֆեսիոնալ մեկ այլ բռնցքամարտիկ՝ Խորեն Գեւորին էլ չհաջողվեց շահել մենամարտն ու նվաճել WBA-ի վարկածով միջին քաշի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Նյուրնբերգում կայացած մենամարտում Եվրոպայի չեմպիոն Խորեն Գեւորը միավորներով պարտվեց Ֆելիքս Շտուրմին (111-117, 113-115, 113-115):

# Կրամնիկի անունը կգրանցվի Գինեսի ռեկորդների գրքում

**Ռուսաստանցի գրոսմայստեր Վլադիմիր Կրամնիկի հաղթանակով ավարտվեց Դորտմունդի շախմատի մրցաշարը: 10 հնարավորից վաստակելով 6,5 միավոր, Կրամնիկը 9-րդ անգամ հաղթող ճանաչվեց Դորտմունդի մրցաշարում, որը ՖԻԴԵ-ի 19-րդ կարգի էր: Կրամնիկի անունը շուտով կգրանցվի Գինեսի ռեկորդների գրքում: Նա դարձավ աշխարհում առաջին շախմատիստը, որին հաջողվեց 9-րդ անգամ հաղթել խոշոր մրցաշարում, ինչպիսին Դորտմունդն է: 9-րդ տուրում Կրամնիկը ոչ-ոքի ավարտեց պարտիան Դմիտրի Յակովենկոյի հետ, իսկ ավարտական պարտիան շահեց Արկադի Նայդիչից:**



**2-4-րդ տեղերը 5,5-ական միավորով բաժանեցին Լեկոն, Կառլսենն ու Յակովենկոն: Բաքրոն վաստակեց 4 միավոր, իսկ աղյուսակը 3 միավորով եզրափակեց Նայդիչը:**

**Անցած տարվա դեկտեմբերին աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար պայքարում Վիշվանաթան Անանդին զիջելուց հետո Կրամնիկն առաջին լուրջ հաջողությանը հասավ: Նա մրցաշարն անցկացրեց առանց պարտության՝ տոնելով 3 հաղթանակ, 7 պարտիա ավարտելով ոչ-ոքի:**

# Հայ պատանիները ռեւանշի հասան

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 16 տարեկանների պատանեկան հավաքականը ռեւանշի հասավ Իրանի իր հասակակիցների հետ անցկացրած 2-րդ խաղում՝ հաղթելով 2-1 հաշվով: Հաշիվը 2-րդ խաղակեսի սկզբում բացեց հյուրերի պաշտպանը՝ գնդակն ուղարկելով սեփական դարպասը: 16 րոպե անց Աշոտ Ավագյանը կրկնապատկեց հաշիվը: Խաղավերջում Ալի Ֆասիհիանը «թրջեց» հաշիվը: Հիշեցնենք, որ առաջին խաղում մեր ֆուտբոլիստները մրցակցին զիջել էին 1-3 հաշվով:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Միջանցքները շատ հանգիստ կարող են փակվել

*1-ին էջից*

Գալուստ Սահակյանն ընդամենը կայքերից մեկին ասել էր, թե ՀՅԴ-ն որոշակի ձեւաչափով՝ այն է ընդդիմադիր կեցվածքով ընդամենը ձգտում է ակտիվացնել խնդիրը, եւ միայն: Գ. Սահակյանի, Է. Շարմազանովի եւ այլոց հեռախոսները մեզ համար անհասանելի մնացին՝ այսօր-վաղը երեւի կարտահայտվեն: Իսկ մեկնաբանությունները, իրոք, այս պահին կարեւոր են, քանի որ կարծես համանախագահներից Մերզլյակովն էր ասել մադրիդյան սկզբունքների հրապարակային քննարկումների անհրաժեշտության մասին, իսկ հայ հասարակության կարծիքն, ինչպես այդ սկզբունքների հիմնական մասի նոր քողազերծումից հետո՝ Օբամա-Մեդվեդեւ-Սարկոզի հայտարարության տեքստով, պարսատիկի քար է, որը մեր՝ հայկական պարսատիկից հետ նետելու կարիք ունի: Սակայն երեկ մեզ հասանելի եղավ միայն «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության ղեկավար **Արմեն Մարտիրոսյանը:**

Ըստ նրա՝ խնդրի կարգավորման հընթացս վտանգներ հայերիս համար սկսվեցին այն պահից, երբ ԼՂ-ն բանակցային գործընթացից դուրս մնաց: Իսկ մադրիդյան սկզբունքները նոր չեն, դրանց շուրջը պայմանավորվածություններն ավելի վաղ էին ձեռք բերվել՝ Վարդան Օսկանյանի եւ Ռ. Քոչարյանի գլխավորությամբ. «Հիմա ընդամենը շրջանակն, այսպես ասած, փակվում է, Նահանգները, Ռուսաստանը, Եվրոմիությունը տարբեր գլոբալ խնդիրների շուրջը, կարծես թե, պայմանավորվածությունների են հանգում եւ ըստ էության որպես դրանց շարունակություն՝ մադրիդյան սկզբունքների հիման վրա պայմանավորվածություն են առաջ մղում, որն ի սկզբանե հանձն էին առել Ալիեւն ու Քոչարյանը, հետագայում՝ նաեւ Սերժ Սարգսյանը, եւ դրա շրջանակներում լուծում են առաջադրում: Դրա վտանգները շատ մեծ են, որովհետեւ, իմ կարծիքով, Լեռնային Ղարաբաղի անկախության եւ անվտանգության թիվ 1 գրավականը ոչ թե խաղաղապահ ուժերն են, այլ ազատագրված տարածքները եւ ժողովուրդն՝ իր վճռականությամբ: Այդ երկու կոմպոնենտը սկզբունքներում չկան, իսկ խաղաղապահ ուժերի առկայությունը դեռ երաշխիք չէ. մենք բազմաթիվ տարածքներ կարող ենք տեսնել աշխարհում, որտեղ խաղաղապահ ուժեր կան, բայց կոնֆլիկտները շարունակվում են»: Ըստ Ա. Մարտիրոսյանի՝ խաղաղապահ ուժերը խաղաղապահի ժամկետից հետո, երբ էներգակիրների տեղափոխության խնդիրը կվերանա, գնալու են. «Ու էդ ժամանակ ԼՂ բնակչությունը եւ ՀՀ-ն դեմ հանդիման են կանգնելու առկա իրողության առջեւ, այն է՝ շրջափակված Ղարաբաղ: Միջանցքը, որը ճանապարհ պիտի ապահովի, որեւէ ձեւով երաշխիք չի կարող լինել հետագայում շրջափակման ենթարկված Ղարաբաղի համար»: Ըստ մեր զրուցակցի՝ կարգավիճակի խնդիրը թեեւ այս պահին անորոշ է (եթե դու սկզբում տալիս ես ազատագրված տարածքները, հետո նոր կարգավիճակի խնդիր է առաջանում), նույնիսկ եթե անկախություն տան Ղարաբաղին, միեւնույն է, ինչ-որ ժամանակահատված հետո այդ անկախությունը կարելի է վերացնել, որովհետեւ ինքը շրջափակված է մնում Ադրբեջանի կողմից. միջանցքը դա ապահովության երաշխիք չէ, միջանցքները շատ հանգիստ փակվում են»: Իսկ թե ինչո՞վ էր պայմանավորված հայտարարությունն այս պահին, արդյոք դա ճնշում կարելի՞ է համարել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների վրա մոսկովյան հանդիպումից առաջ, Ա. Մարտիրոսյանը նախ դա դիտարկեց այն տեսակետից, որ գլոբալ մարտահրավերների վերաբերյալ խոշոր խաղացողներն, այսպես ասած, պայմանավորվածության հանգեցին. սպառազինությունների կրճատում, որի վերաբերյալ համաձայնագիր Ռուսաստանն ու ԱՄՆ-ը ստորագրեցին իրենց նախագահների վերջին հանդիպման ժամանակ, Աֆղանստանի եւ միջազգային տեռորիզմի հարցերն էլ կարծես մեղմվում են փոխհամաձայնությունների արդյունքում, գումարած դրան՝ Եվրոմիության սահմաններն, ըստ էության, հասել են Կովկաս: Այդ շրջանակում պետք է դիտարկել նաեւ Արեւելյան գործընկերությունը, եւ քանի որ տարածաշրջանում որոշակի աշխատանքներ կատարելու անվտանգության առումով միակ օջախը մնացել է Ղարաբաղը, որովհետեւ Կոսովոյի խնդիրն, այնուամենայնիվ, լուծվեց, Հարավային Օսիան եւ Աբխազիան որոշակի առումով լուծում ստացան՝ ի դեմս Ռուսաստանի կողմից անկախության ճանաչման, մնացել է կարծես թե Ղարաբաղը, բնական է, որ ուշադրության կենտրոնում պետք է հայտնվեր Ղարաբաղը: Ա. Մարտիրոսյանի համար մտահոգիչ է, որ մեր արտգործնախարարը դրական գնահատական է տվել այդ հայտարարությանը, այսինքն՝ իշխանությունները պատրաստ են իրագործել այդ քայլերը, բայց նաեւ դիմակայել միշտ հնարավոր է՝ ժողովրդի միահամուռ կամքով կարելի է դիմակայել մարտահրավերներին: Իսկ դրա համար առաջին հերթին իշխանությունները պետք է պատրաստ լինեն հասարակական աջակցություն ստանալ եւ փորձեն լուծել այդ խնդիրները. «Իսկ հասարակության աջակցություն կարող են ստանալ, եթե մարտի 1-ի դեպքերն ամբողջովին բացահայտվեն, քաղբանտարկյալներն ազատ արձակվեն, իրական բարեփոխումներ տեղի ունենան երկրի ներսում: Եթե այդ ամենին պատրաստ են իշխանությունները, ուրեմն մենք այդ համախմբվածությունը կարող ենք ունենալ եւ դրա արդյունքում փորձենք պայքարել մարտահրավերների դեմ: Առաջին հերթին Հայաստանը պետք է բարձրաձայնի, որ միայն ԼՂ օրինական ընտրված իշխանությունների ներկայացուցիչներն իրավունք ունեն ԼՂՀ հետ կապված որեւէ բանակցություն վարելու, եւ Հայաստանն ընդամենը կարող է միջնորդ եւ երաշխավոր լինել ԼՂ անվտանգությանը: Բացի այդ, ճանաչելով ԼՂՀ անկախությունը, Հայաստանը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ՝ պետք է փորձի մեծ թվով գործընկեր պետությունների եւ կազմակերպությունների ներգրավել, որ վերջիններս ճանաչեն ԼՂՀ անկախությունը»: Իսկ մոսկովյան հանդիպումից սպասելիքներ ունենալն արդեն էական չէ, ըստ Ա. Մարտիրոսյանի, որովհետեւ ինչ էլ տեղի ունենա՝ այնուհետեւ իշխանական մակարդակով պետք է տեղի ունենա, 5-6 կետերի շրջանակում, որոնք գծագրված են, որովհետեւ եթե դա Մոսկվայում չեղավ՝ մեկ ամիս հետո մի ուրիշ վայրում կլինի: Էականը շրջանակն է, որ ուրվագծվեց, իսկ ուրվագծված շրջանակի պատասխանատուները նախորդ եւ ներկա իշխանություններն են՝ իրենց կոալիցիոն ուժերով:


ԾԱՆՈՒՑՈՒՄ

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Դիլիջան քաղաքում Բանկի մասնաշենքի կառուցման մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (010) 42 10 08 հեռախոսահամարով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Շենգավիթ» մասնաճյուղ ք. Երևան, Բագրատունյաց փ. 16/2 հասցեով՝ ժամը 9:00-11:00 (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է հուլիսի 13-ից մինչև հուլիսի 23-ը:

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԺԱՌԱՆԳԱՎՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԵՎ ԸՆԾԱՅԱՐԱՆԸ**
**հայտարարում է 2009-2010 ուսարվա**

**Ը Ն Դ Ու Ն Ե Լ Ու Թ Յ Ու Ն**

Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարան եւ ընծայարան կարող են ընդունվել ՀՀ եւ արտասահմանյան երկրների քաղաքացիներ, ովքեր ունեն միջնակարգ, թերի միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթություն եւ զավակն են Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ ովքեր հաջողությամբ կհանձնեն ընդունելության քննություններ հետեւյալ առարկաներից.

1. Հայոց լեզու (գրավոր, հարցարանով)
2. Հայ գրականություն (բանավոր)
3. Հայոց պատմություն (բանավոր)
4. Երաժշտություն (ձայնային տվյալների ստուգում)

Դիմումները տրվում են Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի եւ ընծայարանի տեսուչի անունով՝ ներկայացնելով ներքոհիշյալ փաստաթղթերը.

1. դիմում
2. միջնակարգ, թերի միջնակարգ (կամ ավելի բարձր) կրթության վկայական
3. բնութագիր (դպրոցի տնօրենից)
4. զինվորական դրության մասին փաստաթուղթ (բնօրինակը)
5. ծնողների համաձայնագիրը
6. 2 լուսանկար (3X4)
7. անձնագրի պատճեն
8. ինքնակենսագրություն
9. երաշխավորագիր թեմի առաջնորդից կամ շրջանի հոգեւոր հովվից
10. տեղեկանք բնակավայրից
11. մկրտության վկայական:

Փաստաթղթերը ներկայացնել անձամբ Գեւորգյան Հոգեւոր Ճեմարանի քարտուղարություն:

Դիմումներն ընդունվում են ամեն օր, բացի կիրակի օրերից, հուլիսի 13-ը, ժամը 10:00-16:00 (շաբաթ օրը մինչեւ ժամը 13:00):

Հասցե՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Գեւորգյան Հոգեւոր Ճեմարան:

Հեռախոս (010) 517-185, (010) 517-180:

*Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանի եւ ընծայարանի Տեսչություն*

ՖԼՈՐԵՍ ԱՃՈՒՐԴԻ ՏՈՒՆ ՍՊԸ-ն Ադամանդ ԵԱՀ բորսայի հարթակում իրականացնելու է

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը՝

1.Բնակելի տուն՝ 56.7քմ., հողամաս՝0.076հա,զուգարան՝11.4քմ, ցախանոց՝4.0քմ,պարիսպ՝ 56.0գծմ: Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Առինջ: Մեկնարկային գինը 25,575,000 դրամ:

2. Բնակարան՝ 78.9քմ: Հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 4-րդ թաղ., 16շ., բն.45 :

Մեկն.գինը 11,000,000 դրամ:

3. Բնակարան՝ 76.3քմ: Հասցե՝ Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 4-րդ թաղ., 13շ., բն.32:

Մեկն.գինը 10,000,000 դրամ:

4. Բնակելի տուն՝ 129.4քմ., հողը՝ 0.0306հա: Հասցե՝ ք. Երեւան, Սարի թաղ, 28փ., N 50:

Մեկն. գինը 13,900,000 դրամ:

5. Բնակարան՝ 76.2քմ: Հասցե՝ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր: Մեկն.գինը 6,000,000 դրամ:

6. Բնակելի տուն՝ 177.97քմ., հող՝ 0.25հա, գոմ՝ 58.5քմ.: Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Արագածավան: Մեկն. գինը 9,000,000 դրամ:

7. Բնակելի տուն՝ 44.12ք.մ, հողը՝ 0.13հա, գոմ՝ 28.8քմ, ավտոտնակ՝ 65.7քմ, մառան՝ 21.0քմ: Հասցե՝ Արագածոտնի մարզ, գ. Արագած: Մեկն. գինը 2,500,000 դրամ:

8. Բնակելի տուն՝ 86.95քմ, դահլիճ՝23.5քմ, հող՝0.09հա, զուգարան՝6.3քմ, լողարան՝6.3քմ, մառան՝ 6.85քմ, խոհանոց՝12.3քմ, ավտոտնակ՝ 22.4քմ,թոնրատուն՝ 12.7քմ, կաթսայատուն՝ 4.0քմ: Հասցե՝ Արարատի մարզ, գ. Արբաթ 12փ, 7 տուն:Մեկն. գինը 8,500,000 դրամ:

9. Վարելահող՝0.60 հա: Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, գ Լճաշեն: Մեկն. գինը 1,080,000 դր.:

10.Բնակարան՝91.44 քմ: Հասցե՝ ք.Սեւան, Գագարինավան, Գայի 2/25: Մեկն.գինը 7,200,000 դր:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով 17.08.2009թ-ից մինչեւ 30.12.2009թ. յուր.աշխ.օր ժ.13.00, ք.Երեւան, Ազաթանգեղոսի 6/1 հասցեում: Տեղեկությունների համար դիմել՝ հեռ. 56-31-15:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այժմ ֆինանսական շուկայում Ձեր իրավունքները պաշտպանված են:
Առաջին անգամ Հայաստանում գործում է ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակը, որը կոչված է ԱՐԱԳ, ԱՆՎՃԱՐ եւ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼ լուծելու սպառողների եւ ֆինանսական կազմակերպությունների միջեւ ծագած վեճերը:
Ֆինանսական կազմակերպության հանդեպ ծագած Ձեր պահանջի անվճար եւ արագ քննությունը մեր աշխատանքն է:

Հեռ.՝ 58-23-21, 58-23-22
Էլ. հասցե՝ www.fsm.am, info@fsm.am

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐ

www. azg.am

Առանց միջնորդի վաճառվում է 1 հա սեփականաշնորհված վարելահող, Երեւան-Արտաշատ մայրուղու հարեւանությամբ Երեւանից 5 կմ հեռավորության վրա: Հնարավոր է նաեւ մասնակի վաճառք:

***Հեռ.՝ 091-42-62-29 0236 42200***

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

♦ Օրենսդրական նորություններ ♦ Պարզաբանումներ ♦ Խորհրդատվություն

«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

**Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81**

**Տրվում է վարձով**

2 սեն. բնակարան՝ Զեյթունի շուկայի եւ Yerevan City սուպերմարկետի հարեւանությամբ. կիսակահավորված, լավ վիճակում, ունի բաց եւ փակ պատշգամբներ:

***Հեռ. 098 82-25-48***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60


Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 13.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: